Azg
armenian daily

21 ՆՈՅԵՄԲԵՐ 2000 ԵՐԵՔՇԱԲԹԻ 209 (2177)

Պաղեստինցիներն անկախ պետություն կհռչակեն դեկտեմբերի 31-ին

ԱՄՄԱՆ, 20 ՆՈՅԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ: Պաղեստինցիներն անկախ պետության ստեղծումը կհռչակեն դեկտեմբերի 31-ին: Այդ մասին Հորդանանի «Ալ Դուստուր» թերթին տված հարցազրույցի ժամանակ հայտարարել է Պաղեստինի ազատագրության կազմակերպության կենտրոնական խորհրդի նախագահ Սալեմ Զաանունը: Նրա խոսքերով, անկախության հռչակումը զուգադիպում է պաղեստինցիների զինված պայքարը սկսելու տարեդարձին: 1965 թվականի դեկտեմբերի 31-ին ՖԱՏԽ շարժումն իրականացրել էր Իսրայելի զորքերի դեմ առաջին զինված գործողությունը:

Քոենը կանխագուշակում է մեծ պատերազմ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 20 ՆՈՅԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ: Մերձավոր Արևելքով կատարած իր շրջագայության ընթացքում ԱՄՆ պաշտպանության նախարար Ուիլիամ Քոենը հայտարարել է, որ Իսրայելի եւ Պաղեստինի միջեւ հակամարտությունը սպառնում է դուրս մնալ վերահսկողությունից եւ ներքաշանցել հարեւան երկրներ: «Այնտեղ չափազանց շատ բնակչություն կա: Ամեն օրն իր հետ նոր բաղումներ է բերում, որոնք հանգեցնում են զանգվածային անկարգությունների, կգա մի օր, երբ այդ ամենը կվերածի մեծ պատերազմի», ասել է Քոենը:

ԻՏԱԼԻԱՆ ՀԵՏԵՎԵԾ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ

Եվրախորհրդարանի կոչը Թուրքիային նշանակալից քայլ է Մեծ եղեռնի միջազգային ճանաչման առումով

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

Օրերս «Ազգը» հաճախակի է անդրադառնում հայ-թուրքական երկխոսության հարցին: Վերջինը նոյեմբերի 16-ին էր, որտեղ մեր թերթը ելակետ ընդունելով Հայոց ցեղասպանության ճանաչումը Ֆրանսիայի Սենատում, կարծիք էր հայտնել, թե հայ-թուրքական երկխոսության նախաձեռնությունը ԱՄՆ-ից անցնում է եվրոպական երկրներին: Թուրքիային վերաբերող Եվրախորհրդարանի հատուկ զեկույցը, որն ընդունվեց նոյեմբերի 15-ին, ոչ միայն հաստատեց այդ կարծիքը, այլեւ ցույց տվեց, որ Հայոց ցեղասպանության հարցն արդյունավետ միջոց է դարձել վերոհիշյալ նախաձեռնության համար: Հաստատված կարծիքն ամրապնդեց Իտալիայի խորհրդարանը, երբ նոյեմբերի 18-ի նիստում ընդունեց ցեղասպանության ճանաչման բանաձեւը: Ընդ որում, բանաձեւի ձեւակերպումները գրեթե ամբողջությամբ արտացոլում են Եվրախորհրդարանի զեկույցի համապատասխան դրույթները:

Այդ զեկույցն ընդգրկում է Թուրքիայի ազգային փոքրամասնություններին, երկրում մարդու իրավունքների ոտնահարումներին առնչվող դրույթներ, միաժամանակ իշխանությունների ուշադրությունն է հրավիրվում քրդական հարցի եւ Կիպրոսի խնդրի վրա: Ավելին, Հյուսիսային Կիպրոսում տեղակայված թուրքական զինված ուժերը զեկույցում բնութագրվում են օկուպացիոն զորք: Ինչ վերաբերում է զեկույցի հայկական դրույթներին, ապա Եվրախորհրդարանը կոչ է անում թուրքական կառավարությանը, ինչպես նաեւ Թուրքիայի Ազգային մեծ ժողովին աջակցել երկրում հասարակության մաս կազմող թուրքահայ համայնքին եւ հրապարակայնորեն ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Միաժամանակ Եվրախորհրդարանը Թուրքիայի կողմից Հայաստանի նեկա շրջափակումը վերացնելու, այդ թվում, երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը նպաստելու նպատակով դիմում է թուրքական կառավարությանը, որպեսզի նա երկխոսություն սկսի հայկական կառավարության հետ:

Տես ► էջ 8

ՊԵՏԱԿԱՆ ՈԵԿԵՏ

Պետեկամուտների նախարարությունը կանխավճարներ է հավաքում

Պետբյուջեն լցնելու նպատակով պետեկամուտների նախարարությունը վերսին անցել է հին, փորձված, սակայն օրենքով չթույլատրվող մեթոդին կանխավճարներ հավաքելուն: «Ազգին» դիմած 7 միջին եւ խոշոր առեւտրի օբյեկտների սեփականատերերի հավաստմամբ, հրահանգը ստացվել է նախարարից, քանզի երեւույթը համաստած է: Նախարարության տարածքային ստորաբաժանումների աշխատակիցները մուտք են գործում բոլոր խանութները եւ պահանջում կանխավճար մուծել: Մեզ դիմած վերոնշյալ օբյեկտների սեփականատերերից մեկը հարկային տեսուչներին ներկայացրել է փաստաթղթեր, որտեղ նշված է, որ ինքն արդեն վճարել է 8 ամսվա կանխավճար, սակայն իրենից պահանջվել է գումար, որը համապատասխանում է նրա 3 տարվա հարկային պարտավորություններին: Թե ինչ է դա նշանակում տվյալ օբյեկտի համար, կարծում ենք, լրացուցիչ բացատրությունների կարիք չի զգում: Կանխավճար է պահանջվել անգամ պարզեցված հարկին անցած խանութի սեփականատիրոջից, որն, իմիջիայլոց, նույնպես գերավճարով էր աշխատում: Փաստորեն, անզոր զտնվելով ստվերային շրջանառություն իրականացնողներից հարկեր հավաքելու հարցում (տես «Փեթակում» փոխհարաբերություն»), կառավարությունը փորձում է պետբյուջեի ծեղքվածքը թեկուզ մասամբ փակել ոչ թե շատ պարտաճանաչ հարկատուների միջոցով: Ակնհայտ է, որ այդ քաղաքականության տնտեսական հետեւանքներն առաջիկայում կզգացվեն:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



«Ցեղասպանության ճանաչումը վկայությունն է Եվրոպայի միասնական քաղաքականության»

Հայտարարում է ՀՀ ԱԳՆ խոսնակը

ԵՐԵՎԱՆ, 20 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: ՀՀ ԱԳՆ խոսնակ Արա Պապյանը նոյեմբերի 20-ին հայտարարությամբ է հանդես եկել Իտալիայի խորհրդարանի Ստորին պալատի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւի ընդունման կապակցությամբ: ԱԳՆ հասարակայնության հետ հարաբերությունների վարչությունից «Նոյյան տապանին» են տրամադրել հայտարարության տեքստը, որում ասված է.

«Հայաստանի Հանրապետության արտգործնախարարությունը ողջունում է Իտալիայի խորհրդարանի Ստորին պալատի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը:

Այդ որոշումը, պատմական ճշմարտությունը վերահաստատելով եւ դարասկզբի ողբերգական իրադարձություններին արդարացի գնահատական տալով հանդերձ, հնարավորություն է ստեղծում հաղթահարելու անցյալի ծանր ժառանգությունը եւ բարենպաստ նախադրյալներ ստեղծել տարածաշրջանում համագործակցության հաստատման համար:

Իտալիայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը վկայությունն է Եվրոպայի միասնական քաղաքականության:

Ընդառաջելով Իտալիայի խորհրդարանի կոչին, Հայաստանի Հանրապետությունը հավաստում է իր պատրաստակամությունը բազմաբնույթ հարցերի շուրջ սկսելու երկխոսություն Թուրքիայի հետ»:

Հայաստանի եւ Ադրբեջանի հոգեւոր առաջնորդները կհանդիպեն 29-ին

ՍՈՍԿՎԱ, 20 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՍԵՆՊՐԵՍ: Նոյեմբերի 29-ին Մոսկվայի Սուրբ Դանիել վանքում Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Երկրորդի միջնորդությամբ տեղի կունենա Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի եւ Ադրբեջանի հոգեւոր առաջնորդ Շեյխ-ուլ իսլամ Ալահշուքյուր Փաշա-զադեի հանդիպումը:

Ինչպես Մոսկվայից հաղորդում է Փրայմ Նյուսի թղթակիցը՝ վկայակոչելով ռուսաստանյան զանգվածային լրատվամիջոցներ, Ալեքսի Երկրորդը հայտարարել է, որ հանդիպման հիմնական նպատակը «կլինի երկու ժողովուրդների միջեւ Լեռնային Ղարաբաղի պատերազմի հարուցած թշնամանքի հաղթահարման ուղիների որոնումը»:

Պուտինի այցը Բաքու հետաձգվում է

ԲԱՔՈՒ, 20 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Ադրբեջանի փոխարտգործնախարար Խալաֆ Խալաֆովը լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարել է, որ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի Ադրբեջան կատարելիք այցի մանրամասները դեռեւս ճշված չեն: «Ես չեմ կարող հաստատապես ասել, որ այցը տեղի կունենա նոյեմբեր ամսին, այցի օրը դեռեւս հստակեցման կարիք ունի», ասել է նա: Խալաֆովը նաեւ նշել է, որ այցի նախապատրաստական աշխատանքները ծավալվում են ողջ թափով, եւ Պուտինի այցը Բաքու հավանաբար տեղի կունենա մինչեւ ընթացիկ տարվա վերջը:

Հունվարին Հայաստանում կարող է համաներում հայտարարվել

ԵՐԵՎԱՆ, 20 ՆՈՅԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ: Ամենայն հավանականությամբ, 2001 թվականի հունվարին Հայաստանում կարող է համաներում հայտարարվել: Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակի եւ նոր հազարամյակ մուտք գործելու առնչությամբ: Այդ մասին հայտնի դարձավ հավաստի աղբյուրներից: Նույն աղբյուրը նշեց, որ հանրապետությունում համաներում չի հայտարարվել 1998 թվականից ի վեր:

ԱՅՑ

Նախագահ Քոչարյանն այսօր ժամանում է Հունաստան, իսկ նոյեմբերի 29-ին կհյուրընկալվի Թուրքմենստանում

Խոսնակ Գաբրիելյանը կարեւորում է Հայաստան-Իրան-Հունաստան եւ Հայաստան-Իրան-Թուրքմենստան եռակողմ համագործակցությունը

ԹԱԹՈՒԼ ԶԱՔԱՐՅԱՆ

Այսօր ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորած պատվիրակությունը եռօրյա պետական այցով մեկնում է Հունաստան: Նախագահ Կ. Ստեֆանոպուլոսի անցյալ տարի կատարած պետական այցը Հայաստան, նախագահ Քոչարյանի այսօր սկսվող պետական այցը Հունաստան, վկայում են Երեւան-Աթենք հարաբերությունների բարձր մակարդակը:

Ռոբերտ Քոչարյանը հանդիպումներ կունենա Հունաստանի նախագահ Ստեֆանոպուլոսի, վարչապետ Սիմիտիսի, խորհրդարանի նախագահ Կակլամանիսի, Աթենքի եւ համայն Հունաստանի պատրիարքի, Աթենքի քաղաքապետի, խորհրդարանական կուսակցությունների ղեկավարների, հոլյն գործարար շրջանակների, տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, ծաղկեպսակ կդնի Անհայտ զինվորի հուշարձանին:

Հայաստանի եւ Հունաստանի միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատվել են 1992 թ. հունվարի 20-ին, եւ այս 8-9 տարվա ընթացքում երկու երկրների միջեւ ստորագրվել են 29 պայմանագրեր, որոնք վերաբերում են տնտեսության, արդյունաբերության, կրթության, մշակույթի, գիտության, ռազմական համագործակցությանը: Նախագահի մամլո խոսնակ Վահե Գաբրիելյանը կարեւորեց Հայաստան-Իրան-Հունաստան եռակողմ համագործակցությունը. «Այս շրջանակներում համագործակցություն է ծավալվում արդյունաբերության, տեխնոլոգիաների, առեւտրի, գիտության, տրանսպորտի, հեռահաղորդակցության, էներգետիկայի ոլորտներում, կանոնավոր տեղի են ունենում եռակողմ հանդիպումներ»:

Հիշեցնենք, 1996 թ. պատմական այցով Աթենք է ժամանել ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը:

Տես ► էջ 2

ՈՒՇԱԳԻՐ

Դարձյա՞լ խորհրդարանը քաղաքական կամք չի դրսևորելու

Տարակուսանքներ ընտրական օրենսգրքի շուրջ շարունակվում են

Նախորդ աշխատանքներում ընդունվեցին, թե այս նոր բեկումնային կլինի հաստատես երկու հարցի կարգավորման տեսակետից. Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու նախագիծն Ազգ-ի որոշմամբ հանրաքվեի դնելու հարցը եւ ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու նախագիծը: Նոր օրայի սկիզբը, սակայն, արդեն որերորդ անգամ հուսախաբ արեց առաջին նախագծի հեղինակներին՝ Կոմկուսի խմբակցությանը, որոնց հարցմանը, թե ինչու է նախագիծն ամեն անգամ նոր օրայից նոր օրա ցատկում, Արմեն Խալատյանը պնդում էր, թե այս նոր օրայում այն անպայման ընդունության կանցնի: Ընտրական օրենսգրքի փոփոխությունների հարցը, ինչպես եւ կարելի էր սպասել, դեռեւս առկախված է: Թեեւ ներխորհրդարանական ուժերը պնդում էին, թե կոմդրմիսների աղյուսները եկել են 94/37 հարաբերակցության նախընտրությանը, սակայն, ընդունված օրակարգում երկու հակառակ նախագծեր են դրված, որը ցույց է տալիս փոխզիջումների անհրաժեշտությունը: Մեծամասնական տեղերն զբաղեցնող պատգամավորները (որոնք, ի դեպ, գործող օրենսդրության համաձայն 75-ն են եւ փաստորեն ճնշող մեծամասնություն են) ոչ մի կերպ դիրքերը զիջել չեն ուզում: Բացի այդ, հստակեցնելու խնդիրներ կան նաեւ բանակի քվեարկությանը մասնակցելու եւ ընտրատարածքների ձեւավորման հարցերի տեսակետից: Այս հանգամանքներում, հասկանալի է, վստահորեն չի կարելի պնդել, թե նոր օրայի ընթացքում նշված երկու նախագծերը հաջողությամբ կընդունվեն: Այս կողմից ընդունված օրակարգով խորհրդարանը պետք է ընդարկի նաեւ Ազ կանոնակարգի նոր նախագիծը, եւ Ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերով մշտական հանձնաժողովի նախագահի թափուր մնացած տեղի ընտրության հարցը: Վերոհիշյալ բոլոր նախաձեռնություններն էլ, ըստ էության, առաջնային են, մինչդեռ դրանք թողած՝ խորհրդարանն անցավ պահի համենատ երկրորդական նախաձեռնությունների ընդարկմանն ու քվեարկություններին:

Առաջին նախագիծը, որն արժանացավ խորհրդարանի ուշադրությանը, ՀՀ նախագահի առաջարկություններն էին «Կրթության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի վերաբերյալ, որոնցով էլ նախագիծը ես էր ուղարկվել խորհրդարան: Հիշեցնենք, որ դրանով նախատեսվում էր ուսուցիչների եւ դպրոցների վարչական մասի աշխատողների աշխատավարձերի բարձրացում, ինչպես նաեւ 1-3-րդ դասարանների աշակերտներին դասագրքերի անվճար տրամադրում: Նախագահի ներկայացրած բացատրագիր-տեղեկանքում որպես պատճառաբանություն նշվում է, որ նախաձեռնությունը նոր կազմվող բյուջեի վրա 800 մլն դրամ է արժենալու, որից 723 մլն-ը միայն աշխատավարձերի բարձրացման մասով, իսկ նման գումարներ կառավարությունը 2001 թ. կարվածով չի կարող հայթայթել: Օրենքը չտպալելու նպատակով նախագահն առաջարկում է այն ուժի մեջ թողնել միայն 2003 թվականից, որն էլ առանց լուրջ առարկությունների ընդունվեց պատգամավորների կողմից: Հետեւությամբ, առաջին ընթերցմամբ ընդունվեց նաեւ «Ավելացված արժեքի մասին օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու» նախագիծը, որով, ինչպես արդեն ներկայացրել ենք, բանկարժեք քարերի ներմուծումից հանվում է ավելացված արժեքի հարկը՝ նպատակաուղղված լինելով նպաստել տեղական արտադրության ծավալների մեծացմանը:



Նույն բախտին չարժանացավ պատգամավոր Խալատուր Սուքիասյանի նախաձեռնությամբ ներկայացված «Հասատագրված վճարների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» նախագիծը: Նախատեսվում է տնտեսվածքներում օժանդակ տարածքների օգտագործման դիմաց գանձվող հասատագրված վճարները իջեցնել մինչեւ 20 տոկոսի՝ առավել բեռեւացնելու առեւտուր իրականացնողների վիճակը: Տրամաբանական է, որ այս դեպքում հստակ պետք է հաշվարկել ինչպես օգտագործվող, այնպես էլ օժանդակ տարածքների մակերեսները, քանի որ բացառված չէ, որ հակառակ դեպքում աղանցք կարող է բացվել առեւտուր կազմակերպողների (այսպես կոչված տնավաճառների տերերի) եւ իրականացնողների (սեղանների տերերի) միջեւ սվերային հարաբերությունների ծեւավորման համար:

Նման վիճակ կարող է ստեղծվել մյուս փոփոխությամբ եւս, ըստ որի նախատեսվում է մեկ աշխատանքային օր արտակարգ պատահարների հիմնավորմամբ առեւտուր իրականացնողներից չգանձել հաշված հարկատեսակը: Փոփոխությունն իսկապես դրական ազդեցություն կարող է ունենալ, սակայն չի կարելի երաշխավորել, որ անհրաժեշտ վերահսկողության բացակայության պարագայում այդ մեկ օրվա համար նախատեսվող գումարը հնարավոր է գանձել նաեւ անօրինական ճանապարհով, իսկ այդ դեպքում որեւէ փոփոխություն կատարելը պարզապես ազդեցություն չի ունենա: Պատգամավորների մեծ մասը, նաեւ կառավարությունը՝ ի դեմս պետեկամուտների փոխնախարար Արմեն Ալավերդյանի, նախագծին դրական արձագանքեցին: Միակ հարցը, որ մինչեւ երկրորդ ընթերցման ներկայացնելը կճշտվի նախագծի հեղինակի եւ կառավարության միջեւ, հիշատակված 20 տոկոսի փոփոխությունների կամ ընդհանրապես հանման խնդիրն է:

Ամեն դեպքում կարելի է որոշակիորեն ասել, որ նախագիծն առաջին ընթերցմամբ առավոտյան խորհրդարանի կողմից կընդունվի, որից հետո կսկսվեն ինարկումները «Ազ կանոնակարգի մասին» օրենսդրական նախաձեռնության շուրջ: Ինչպես տեղեկացրեց պետահրավական հարցերի հանձնաժողովի նախագահը, այս նախաձեռնության շուրջ արդեն իսկ իրենց են ներկայացրել 550 առաջարկություն, որը ինքնին լայնամասշտաբ եւ երկարատեւ ինարկում է ենթադրում: Դա իր հերթին նշանակում է, որ ընտրական օրենսգրքում եւ Սահմանադրության մեջ փոփոխությունների նախագծերը դեռեւս կմնան առկախված:

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՀՈՒՆԱՍՏԱՆ

Ռ. Քոչարյան. «Քաղաքական ոլորտում պրոբլեմներ չունենք»

Հայաստանում կան հունական ներդրումների հաջողված օրինակներ

Այցի նախօրեին նախագահ Ռոբերտ Քոչարյանը հարցազրույց է տվել «NEW HELLENIC TV NET» հեռուստաընկերությանը

- Պրն նախագահ, ինչպե՞ս եք տեսնում Հայաստանի եւ Հունաստանի երկկողմ հարաբերությունները տնտեսական եւ քաղաքական ոլորտում, եւ արդյոք կա՞ն այստեղ բարելավման եւ զարգացման միտումներ:

- Ես ենթադրում եմ, որ հարցը տնտեսականից է սկսվում, քանի որ քաղաքական ոլորտում մենք պրոբլեմներ չունենք եւ անկախություն ձեռք բերելուց անմիջապես հետո շատ թեմ եւ հետեւողական քաղաքականություն է վարվում եւ հայկական, եւ հունական կողմից: Տնտեսական բնագավառում եւս, կարող եմ նշել, որ հիմնական օրենսդրական դաշտը մեր երկկողմ հարաբերություններում ձեւավորված է, եւ ձեւավորման ընթացքում է գտնվում եւ Հայաստանում կան հունական կապիտալի ներդրումների բավականին հաջողված, հետաքրքիր օրինակներ: Կան համատեղ ձեռնարկություններ մի շարք բնագավառներում եւ կան ծրագրեր նման կարգի նոր ձեռնարկություններ եւս ստեղծելու:

- Պրն նախագահ, Հունաստանը եւ Հայաստանը համագործակցում են միջազգային ասպարեզում՝ կազմված մեր երկրների ազգային խնդիրների հետ: Ինչպիսի՞ն է Ձեր դիրքորոշումը մեր երկու երկրների հարաբերություններում՝ կազմված Թուրքիայի եւ Կիպրոսի խնդրի զարգացումների հետ:

- Միջազգային տարբեր կազմակերպություններում մեր համագործակցությունը բավական արդյունավետ է եւ պետք է ասեմ, որ մի շարք կարեւոր հարցերի շուրջ մենք բավականին հետեւողական եւ մշտական կոնսուլտացիաների մեջ ենք լինում: Մենք բնական դաշնակից ենք, ըստ էության, նաեւ այս տարածաշրջանում, եւ ինչ վերաբերում է տվյալ դեպքում Կիպրոսի հարցին, ապա մենք կողմնակից ենք ՄԱԿ-ի բանաձեւի շրջանակներում այդ հարցի կարգավորմանը, իսկ սա համընկնում է հունական կողմի դիրքորոշմանը:

Ինչ վերաբերում է Թուրքիայի հետ հարաբերություններին, ապա այստեղ մենք ունենք նման պրոբլեմներ, բայց կարծում եմ, որ պետք է ուղղակի հետեւողական աշխատենք, նաեւ համաձայնեցնելով մեր քայլերը այդ հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ: Կարծում եմ խաղաղությանը ուղղված քայլերը պետք է գերակշռողը լինեն մեր քաղաքականության մեջ:

- Շնորհակալություն, մեծ ուրախությամբ կսպասենք Ձեզ Հունաստանում:*

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՍՍՍԼՈ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Նախագահ Քոչարյանն այսօր ժամանում է Հունաստան, նոյեմբերի 29-ին կհարընկալվի Թուրքմենստանում

Սկիզբը էջ 1

Նոյեմբերի 29-ին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի գլխավորած պատվիրակությունը մեկօրյա պաշտոնական այցով կմեկնի Թուրքմենստան: Երեւանի եւ Աշգաբադի միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատվել են 1992 թ. հոկտեմբերի 9-ին, մինչ օրս երկու երկրների միջեւ ստորագրվել է 48 պայմանագիր, որոնք վերաբերում են ավտոմոբիլային հաղորդակցությանը, առեւտրատնտեսական համագործակցությանը, այլ ոլորտների: Ըստ մամլո խոսնակ Գաբրիելյանի, Երեւան-Աշգաբադ համագործակցությունը կարեւորվում է հատկապես տնտեսական ոլորտում: Նախկին նախագահ Տեր-Պետրոսյանը 1993 եւ 1994 թթ. երկու անգամ այցելել է Թուրքմենստան, իսկ 1996-ին Երեւան է ժամանել նախագահ Ս. Նիյազովը: «Մենք կարեւորում ենք նաեւ Հայաստան-Իրան-Թուրքմենստան եռակողմ համագործակցությունը», նշեց Վ. Գաբրիելյանը:

Դեկտեմբերի 1-ին Մինսկում տեղի կունենա ԱՊՀ երկրների հերթական գագաթաժողովը: Ըստ նախնական համաձայնության, Մինսկում նախատեսվում է Ռոբերտ Քոչարյանի հերթական հանդիպումը Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի հետ: Սակայն, համաձայն Բաքվից ստացվող տեղեկությունների, նախագահ Ալիեւի առողջական վիճակը դժվար թե թույլ տա նրան մեկնել Մինսկ:

Ֆիզիկայի ինստիտուտի տնօրենը դեմ է գիտատեխնիկական գործունեության մասին օրինագծի ընդունմանը

ԵՐԵՎԱՆ, 20 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅԱՆ ՏՊԱՆ. Երեւանի Ֆիզիկայի ինստիտուտի (ԵրՖԻ) տնօրեն Ռուբեն Մկրտչյանը դեմ է գիտական եւ գիտատեխնիկական գործունեության մասին օրենքի ընդունմանն այն տեսքով, որով ընդունվել է Հայաստանի Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ: Իր տագնապները նա արտահայտեց նոյեմբերի 20-ի մամլո ասուլիսում, նշելով, որ ջանքեր է գործադրելու թույլ չտալու համար տվյալ օրինագծի ընդունումը, որն ընդգրկված է խորհրդարանի ներկայիս նստաշրջանի օրակարգում: «Ներկայիս տեսքով օրենքը փաստորեն հեղաշրջում կկատարի գիտական գործունեության կազմակերպման ասպարեզում, ըստ որում՝ իրադրության կտրուկ վատթարացման ուղղությամբ», հայտարարեց Ռուբեն Մկրտչյանը:

Եթե օրենքն այնուամենայնիվ ընդունվի, ապա Ռուբեն Մկրտչյանը մտադիր է խոչընդոտել դրան ՀՀ նախագահի ստորագրման փուլում, որի հասցեով արդեն նամակ է ուղարկված: ԵրՖԻ տնօրենի տագնապն են հարուցում օրենքի հիմնականում գիտական հիմնարկների իրավական կարգավիճակին վերաբերող դրույթները, որոնց համաձայն, ոչ կոմերցիոն կառույցի կարգավիճակ է վերապահված միայն կոնկրետ հասատության Գիտությունների ակադեմիային: Իսկ մյուս գիտական հասատությունները, նշեց նա, գործնականորեն զրկված են ընտրությունից եւ պետք է դառնան կամ բաժնետիրական ընկերություններ (կոմերցիոն կառույց), կամ ֆոնդեր: Մկրտչյանի կարծիքով, Գիտությունների ակադեմիայի առանձնահատուկ կարգավիճակը եւ օրենքի որոշ այլ դրույթներ թույլ են տալիս ՀՀ ԳԱԱ-ին իր ձեռքը վերցնել բոլոր ֆինանսական եւ տնտեսական կառավարման լծակները գիտական գործունեության բնագավառում: «Ես հարգում եմ եւ ակադեմիան, եւ ակադեմիկոսներին, սակայն չեմ կարծում, որ մենք պետք է կառավարման լծակները ցմահ թողնենք ընտրյալ մարդկանց՝ ակադեմիկոսներին», հայտարարեց Ռուբեն Մկրտչյանը:

Չի բացառվում, որ Մկրտչյանի առանձնակի անհանգստությունը կապված է հենց իր ղեկավարած ինստիտուտի հետ, որի բյուջեն խորհրդային տարիներին գերազանցում էր ակադեմիական ինստիտուտների բյուջեն ամբողջությամբ վերցրած: ԵրՖԻ-ն հիմա էլ ունի հզոր նյութատեխնիկական բազա, ներդրումներ: Միայն վերջին շրջանում որոշում է ընդունված ԵրՖԻ բազայի վրա ստեղծել տարածաշրջանային կենտրոն ժամանակակից սինխրոտրոնային արագացուցիչով SESAME ծրագրի շրջանակներում: Կենտրոնի ստեղծման համար ամերիկյան Կոնգրեսի կողմից ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ պայմանավորվածությամբ հատկացվել է 15 մլն դոլար Հայաստանին ցուցաբերվող ամենամյա օգնության 90 մլն դոլարից:

Սակայն Ռուբեն Մկրտչյանը ժխտեց իր ելույթի կապը SESAME նախագծի հետ: Նա ընդգծեց, որ օրենքում չպետք է լինեն բացառություններ կոնկրետ կազմակերպության համար՝ լինի դա Գիտությունների ակադեմիան, ԵրՖԻ-ն թե էլի որեւէ մեկ ուրիշը: Ինչպես գտնում է ԵրՖԻ տնօրենը, այդ լծակները պետք է ունենա պետական կառույց՝ կրթության եւ գիտության նախարարությունը, որի վրա, ի տարբերություն ակադեմիայի, հնարավորություն կա ներազդել եւ անգամ ճնշում գործադրել:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 9 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագիր
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562863, AT&T (3742) 151065,
e-mail: azg2@arminco.com
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգչային ծառայութիւն / հեռ. 562941
Apple Macintosh
համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

Հյուրանոցի շրջակայքը կկանաչապատվի

Սա է «Հաղթանակ» զբոսայգու տարածքում հյուրանոցի կառուցում արտոնելու քաղաքապետարանի հիմնավորումը

«Քաղաքապետարանը մոտ երկու շաբաթ առաջ կայացրել է «Հաղթանակ» զբոսայգու տարածքում հյուրանոցի կառուցումն արտոնող որոշում», **«Ազգին»** տեղեկացրեց Երևանի քաղաքապետարանի ճարտարապետաքաղաքաշինական վարչության պետ Հրաչյա Սարգսյանը:

Հյուրանոցի կառուցման համար արված ծառահատումների մասին պտսվող լուրերին հակառակ պրն Ի դեպ, չնայած խնդրի լուրջ քննարկումներին, քաղաքապետարանը կառուցումն արտոնել է առանց հաստատված նախագծի գոյության: Դարձյալ վերադառնալով այգու տարածքում հյուրանոցի համար հողահատկացման փաստին Հ. Սարգսյանն ասաց, թե քաղաքաշինական տեսակետից հնը փաստը նորմալ է գնահատում: Այնուամենայնիվ, եթե խնդրի պատասխանատուներն այդքան շեշտում են հյուրանոցի կառուցման հետ նաեւ



Սարգսյանը նշեց, թե խոսքը ծառազուրկ տարածքի մասին է, որն, ընդհակառակը, կբարեկարգվի: Նույն կարծիքին է նաեւ կանաչապատման ձեռնարկության պետ Ալֆրեդ Ներսիսյանը, որին **«Ազգն»** արդեն անդրադարձել է: Ըստ պրն Ներսիսյանի, «Հաղթանակ» զբոսայգուց շինարարությանը հատկացված 10 հազար քմ տարածքից 7000-ը պայմանավորվածության համաձայն կանաչապատվելու է: «Մենք արդեն դելտրոլլանն ենք կազմում: Կանաչապատումը կիրականացնի մեր ձեռնարկությունը, որը հաստատող պայմանագիր կկնքենք մոտ օրերս»:

Բայց խնդիրը միայն ծառազուրկ տարածքի հնարավոր վերացումը չէ, կամ, ինչպես պնդում են քաղաքապետարանի պաշտոնյաները՝ ծառազուրկ տարածքի կանաչապատումը: Արդյոք զբոսայգու չորացած հատվածները կանաչապատելու լավագույն տարբերակն է սա: Հյուրանոցի կառուցումն այսօր արդյոք սկզբունքային նախադեպ չի՞ դառնա վաղը զբոսայգու տարածքից նման այլ հատատությունների եւս բաժին տրամադրելու համար: «Ոչ, չեմ կարծում: Նաեւ քաղաքը դոգմատիկ կառուցվածք չունի: Միշտ կարելի է փոփոխել՝ առանց վնասելու, իհարկե, կանաչ գոտիները: Նման խնդիրները մենք լուրջ քննարկում ենք», հավաստեց Հ. Սարգսյանը:

Ի դեպ, չնայած խնդրի լուրջ քննարկումներին, քաղաքապետարանը կառուցումն արտոնել է առանց հաստատված նախագծի գոյության: Դարձյալ վերադառնալով այգու տարածքում հյուրանոցի համար հողահատկացման փաստին Հ. Սարգսյանն ասաց, թե քաղաքաշինական տեսակետից հնը փաստը նորմալ է գնահատում: Այնուամենայնիվ, եթե խնդրի պատասխանատուներն այդքան շեշտում են հյուրանոցի կառուցման հետ նաեւ տարածքի մյուս հատվածի կանաչապատումը որպես իրենց քայլերի հիմնավորում, առավել նպատակահարմար չէ՞ր լինի այգու բարեկարգումն ու չորացած հատվածների կանաչապատումը:

Իսկ ընդհանրապես, արդարացվա՞ծ է «Հաղթանակ» զբոսայգում հյուրանոց կառուցելը: **«Ազգը»** դիմեց մի քանի ճարտարապետների, որոնց միահամուռ պնդմամբ՝ հատատակական հանգստի վայրերում հյուրանոց չեն կառուցում: Մեկ այլ մերկապարանոց հիմնավորում, թե հյուրանոցը կառուցվում է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առթիվ, եւս արդարացված չէ: 1700-ամյակի առիթով հյուրանոց կարելի էր կառուցել մեկ այլ վայրում: Բացի այդ, ո՞վ է ասում, թե ծմռան ամիսներին հնարավոր է կառուցել, հանդերձավորել, շահագործման հանձնել հինգաստղանի, եվրոպական չափանիշներին հարիր հյուրանոց:

Երեկ մենք զրուցեցինք ճարտարապետների միության նախագահ Ալբերտ Զուրաբյանի հետ, որը խոստացավ հարցին ընդգրկուն պատասխան տալ միայն փաստերին ու փաստաթղթերին ծանոթանալուց, քաղաքապետարանին կից քաղաքաշինական խորհրդի հինգշաբթի օրը տրամադրվող նիստից հետո:

Ավելացնենք նաեւ «Հաղթանակ» զբոսայգում կառուցվող հյուրանոցի նախապատրաստական աշխատանքների եռուզեռ է:

ԼԻԼԻԹ ԳԲԻԳՈՐՅԱՆ
ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

2000 թվականին Հայաստանի եւ Իրանի առեւտրաշրջանառությունը կկազմի 110 մլն դոլար

ԵՐԵՎԱՆ, 20 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Իրանը Հայաստանի վստահելի առեւտրային գործընկերն է, եւ ժամանակն է նույն թափով աշխատել՝ նաեւ ներդրումների ուղղությամբ: Նոյեմբերի 20-ին հայ-իրանական գործարար համաժողովի ժամանակ այս մասին հայտարարելով, Հայաստանի Արդյունաբերողների եւ գործարարների միության նախագահ Արամ Վարդանյանը նշել է, որ եթե 1999 թ.-ին երկու երկրների միջեւ առեւտրաշրջանառությունը կազմել է 100 մլն. դոլար, ապա մինչեւ այս տարեվերջ ակնկալվում է, որ այդ ցուցանիշը կհասնի մոտ 110 մլն.-ի: Ա. Վարդանյանը հույս հայտնեց, որ գործող ավանդական ցուցահանդեսի արդյունքում գալիք տարի կգրանցվեն ավելի բարձր ցուցանիշներ:

Զարգացման հայկական գործակալության մասնագետները, ներկայացնելով Հայաստանի ներդրումային միջավայրը, նշեցին, որ թեեւ Հայաստանում ներկայումս առկա է գործազրկության բարձր տոկոս, ներդրումների ցածր մակարդակ եւ բացասական առեւտրային բալանս, կառավարությունն այնուամենայնիվ վարում է նպաստավոր ներդրումային քաղաքականություն:

Հայ գործարարների գնահատմամբ, հանրապետությունում հետաքրքրությունը իրանական արտադրության ապրանքների նկատմամբ որոշ չափով նվազել է հոգուտ եվրոպական արտադրատեսակների: Նրանց կարծիքով, դրան նպաստել է նաեւ վերջին տարիներին Իրանից ցածրորակ ապրանքների ներկրումը: Հայ գործարարների համոզմամբ, իրանցի գործընկերների համար պետք է հասկացնել հայկական սպառողական շուկայի պահանջները:

Ցավակցություն

ՀՈՒԱԿ Հանրապետական վարչությունը եւ **«Ազգ»** օրաթերթի խմբագրությունը ցավակցում են Շամիրամ Աղաբեկյանին սիրելի մորեղբոր **ՈՒԶՄԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԻ** մահվան առթիվ:

Հանդիպում ֆերմերների միությունում

Նոյեմբերի 17-ին հանդիպեցին Ֆերմերների ազգային միության նախագահության անդամները եւ ԱՄՆ-ի գյուղատնտեսության մարկետինգի աջակցության ծրագրի տնօրեն դոկտոր Քրեյգ Ինֆանգերը: Հանդիպման նպատակը ՖԱՄ-ի գործունեությունն ու ծրագրերի ծանոթացումն էր (ներկայացրեց միության նախագահ Վանիկ Սողոմոնյանը), ինչպես նաեւ Հայաստանում գյուղատնտեսությանն աջակցող եւ վերամշակող ձեռնարկությունների զարգացման ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպության հետ փոխադարձ համագործակցության եզրեր գտնելը:

ՖԱՄ-ը, որին անդամակցողների թիվն արդեն հասնում է 420-ի, նույնպես կոչված է հանրապետությունում գյուղատնտեսության ճյուղերի, գիտական գյուղատնտեսության զարգացմանն ու մրցունակ գյուղմթերքների արտադրությանը խթանելուն, այսօր արդեն հանրապետության տարբեր մարզերում ունի ցուցադրական ֆերմերային տնտեսություններ:

Միության կազմում գործող 27 գիտնականներից բաղկացած խորհրդի գիտական ներդրումների շնորհիվ նշված տնտեսություններում տոհմային գործը եւ կաթի վերամշակումը դրված են ամուր հիմքերի վրա եւ արդեն իսկ շուկա են հանվում միջազգային չափանիշներին համապատասխան գյուղմթերքներ: Թերեւս զգացվում է նոր տեխնոլոգիաների եւ հոսքագծերի ներդրման, սարքավորումների նորացման անհրաժեշտություն, որի իրացման գործում ակնկալվում է մարկետինգի աջակցության ծրագրի օժանդակությունը:

Ամերիկյան կողմին առավել հետաքրքրեց ՖԱՄ-ի կազմում ստեղծված մթերման ասոցիացիայի գործունեությունը, որը հանրապետության մարզերում պետք է իրականացնի կաթնամթերքի եւ մսի մթերում: ՖԱՄ-ի նախագահությունն առաջիկայում ասոցիացիայի գործունեության ծրագրի փաթեթ կներկայացնի ԱՄՆ-ի գյուղատնտեսության տնօրինությանը:

ՆԵԼԼԻ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀՂՄ-ՆԵՐ

Փոխհրաձգություն «Փեքակում»

Ինչպես տեղեկացանք «Փեքակ» տնավաճառի առեւտրականներից, հաշվիճ դրամարկղային մեքենաների ներդրման պետական մարմինների փորձն այստեղ ավարտվել է արյունահեղությամբ: Պետեկամուտների նախարարության աշխատակիցներին այդ գործընթացն իրականացնելու նպատակով օժանդակող ՆԳՆ 6-րդ վարչության (կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի) եւ տնավաճառի պահպանությունն իրականացնող աշխատակիցների միջեւ փոխհրաձգություն է սկսվել, որի հետեւանքով կան վիրավորներ: Ըստ մեր ունեցած տվյալների, մի քանի օր առաջ պետեկամուտների նախարարությունն են հրավիրվել հանրապետությունում գործող բոլոր տնավաճառների եւ շուկաների սեփականատերերն ու տնօրենները, որտեղ նրանց տեղեկացվել է ՀՂՄ-ների մոտալուտ տեղադրման մասին: Բնականաբար, դա չէր կարող ոգեւորվածությամբ ընդունվել: «Փեքակի» միջադեպին երեկ հաջորդել է Ազգային ժողովի շրջափակումը եւ բողոքի ցույցը տնավաճառների առեւտրականների կողմից: Ցուցարարները պահանջում էին չտեղադրել ՀՂՄ-ները: Երբ փորձեցինք իմանալ, թե արդյոք նրանք տեղյա՞կ են, որ ՀՂՄ-ների տեղադրումից հետո կարելի է օգտվել պարզեցված հարկի ընձեռած փաստորեն արտոնյալ հնարավորություններից, պարզվեց, որ նրանց գերակշիռ մասն ընդհանրապես անտեղյակ է կամ մասամբ է տեղյակ: Թերեւս հենց այդ անտեղյակությունն էլ առեւտրականների ՀՂՄ-ներից ահաբեկված լինելու հիմնական պատճառներից մեկն է: Մինչդեռ նրանց ցույցի կամ այլ քայլերի ուղղորդողները լավ են հասկանում, որ այդ դեպքում ներկայումս պետքյուջե վճարվող չնչին գումարների փոխարեն դրանք բազմիցս գերազանցող հարկեր վճարելու վտանգ է առաջանալու:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Յոթ տարի առաջ կատարված սպանության մեջ մեղադրվում է միլիցիայի գնդապետը

«Հայաստանում երբեք մարդուն արդարացնող դատավճիռ չի կայացվում, մի բան կկոցնեն, որպեսզի արդարացնեն բանտային ռեժիմի տակ պահելը», տարիներ առաջ հայտնեց «31»-ի գործով դատապարտվածներից մեկը: Այդ կարծիքին է նաեւ փաստաբան Ռուբեն Ռշտունին, որը ներկայումս սպանության մեջ ամբաստանվող միլիցիայի գնդապետ Աշոտ Ավագյանի դատապաշտպանն է:

Սպանությունը կատարվել է ՄՀՕՋ-ի եւ «կովող տղաների» տիրապետության ժամանակաշրջանում՝ 93 թ.-ին: Աշտարակի ռեստորաններից մեկում ճաշող «կովող տղաներից» Սայաթ-Նովա Տաշյանը հանդգնել է իրենց ճաշասենյակ հրավիրել մյուս ճաշասրահում ճաշող Աշոտ Ավագյանի ու նրա ընկերների համար նվագողներին: Մի կաթիլ մեղրի պատմության օրինակով սկսված վեճի ժամանակ ավտոմատի, ատրճանակի կրակոցներ են լսվել, նոնակ է պայթեցվել, որի հետեւանքով մահացել է երկու մարդ: Նրանցից մեկի՝ Սայաթ-Նովա Տաշյանի սպանության մեջ ամբաստանվող Աշոտ Ավագյանին առաջի անգամ կալանքի են վերցրել 93 թ. մարտի 16-ին, սակայն երեք օր հետո բաց են թողել: Մի քանի ամսից կասեցվել է նաեւ գործի նախաքննությունը: Տարիներ անց նա կրկին կալանքի է վերցվել եւ 1 տարի 10 ամիս արգելանքի տակ է գտնվում: Գործի քննությունը լսվել է երեք դատական այցաններում, եւ վճռաբեկ դատարանի կողմից բեկանվելուց հետո կրկին վերադարձվել է Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարան (ք. Աշտարակ)՝ նոր դատաքննության:

Նոյեմբերի 20-ին դատաքննության ավարտից առաջ փաստաբան Ռշտունին մեկ անգամ եւս անդրադարձավ նախաքննության ժամանակ կատարված օրինախախտումներին, գտնելով, որ թվարկածները չափազանց լուրջ փաստարկներ են իր պաշտպանյալին արդարացնելու համար: Նախագահող դատավոր Սուրեն Մնոյանը խոստացավ օրինախախտումներին անդրադառնալ, կամ, այլ կերպ ասած, ապացույցները գնահատել խորհրդակցական սենյակում: Ռ. Ռշտունին համոզմունք ուներ, որ այս գործը վերստին կերջանակի դատական եռատիճան համակարգում: Այսինքն՝ կարուսելի տարբերակն է ընտրված: Այնուամենայնիվ, մեղադրող եւ պաշտպանական ճառեր դեռեւս չեն հնչել եւ վաղ է դատողություններ անել անօրինականությունների ու օրինախախտումների մասին:

Հ. Գ.- Աշտարակ քաղաքի դատարանում կարծես թե վերականգնվել է ատենակալների ինստիտուտը՝ դատական նիստերի քարտուղարը ներս է մտնում դատավորի հետ միասին ու տեղ գրաղեցնում նրա կողքին: Ենթադրաբար դահլիճում հայտնված երկրորդ գահավորակը նրանն է, որը ժամանակավորապես հանձնել է պետական մեղադրողի տնօրինությանը: Այլապես փաստաբանին էլ նույն արտոնից կհատկացվեր: «Ոտի՛, դատարանն է գալիս» արտահայտությունը, ըստ երեւույթին, ճանձրացրել է քարտուղարին եւ այն հնչեցնելու պարտավորությունը հարկադրված ստանձնել է կալանավորին ուղեկցող պահակազորը:

Ա. Պ.

Փախստականներին առնչվող խնդիրներ ծաղկաձորյան սեմինարում

Նոյեմբերի 23-24-ը Ծաղկաձորի գրողների ստեղծագործական տանը կանցկացվի սեմինար «Հանգվածային լրատվության միջոցների դերը փախստականների իրավական պաշտպանության գործում» թեմայով: Սեմինարի կազմակերպիչը ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Թոմաս Բիրաքը:

Փախստականներին կենսականորեն հուզող ամենատարբեր «Փախստականների եւ ապաստան հայցողների վերաբերյալ միջազգային փաստաթղթերի ներկայացումը», «Ապաստան հայցողների ՀՀ տարածք մուտք գործելու թույլտվությունը», «ՀՀ փախստականների մասին օրենքը», «Հայ ադոպտիվ միգրանտները» եւ այլ թեմաներով զեկուցումներ կկարդան Լորենս Մգբանգսոնը, Պետրոս Աղաբաբյանը, Արմեն Էդգարյանը, Արայիկ Հարությունյանը, Ստեփանի Ռինվիլը, Արմինե Ստեփանյանը:

Սեմինարի կազմակերպման ողջ ծախսերն իրականացնում է ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը:

ՄԵԼԱՆՅԱ ԹԱԴԱԵՎԱ

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«Մասիս տոբակոն» կարտահանի 15 մլն դոլարի արտադրանք

1200 աշխատատեղ գործարանում, 10 հազար՝ գյուղատնտեսության մեջ

Հայ-հունական «Մասիս տոբակո» համատեղ ձեռնարկության գործարկումը, որին հատկապես անհամբերությամբ էին սպասում Մասիսի բնակիչները, իրականություն դարձավ: Նոյեմբերի 18-ին հիմնականում փախստականներով բնակեցված այս քաղաքում ընկերության բացման հանդիսավոր արարողությունն էր:

«Մասիս տոբակոյի» արտադրական գործունեության ծավալմամբ հնարավորություն է առաջանում տարեկան մթերել 12 հազար տոննա ծխախոտի հումք, ֆերմենտացնել եւ իրացնել: 2 հազար տոննան «Գրանտ տոբակոյին» անհրաժեշտ հումքի առավելագույն չափաբաժինն է: Մնացած 10 հազար տոննան արտահանվելու է, ընկերության նախագահ Սամվել Սահակյանի հավաստմամբ հիմնվելու Ռուսաստան, Բելառուս եւ Ուկրաինա, այնպես էլ արեւմտյան երկրներ: Վերջիններիս ընկերությունները համագործակցում են «Մասիս տոբակոյի» հունական կողմի բաժնետեր «Միսիրյան» ընկերության հետ: Գումարային առումով շուրջ 10 մլն դոլար արժողությամբ հումք է մթերվելու, իսկ արտահանվելու է շուրջ 15 մլն դոլարի ֆերմենտացված ծխախոտ:

«Մասիս տոբակոյի» (նախկին փայտամշակման կիսաքանդ գործարանի) շինարարության մեջ ներդրվել է 4 մլն դոլար: 1.5 տարվա ընթացքում կառուցվել է շուրջ 6 հա տարածք ունեցող գործարանը: Այժմ գործարանում արդեն աշխատում են 850 մարդ 100 դոլար միջին աշխատավարձով: Մեկ ամիս հետո աշխատատեղերի թիվը կհասնի մինչեւ 1200-ի: «Մասիս տոբակոյի» բաժնետոմսերը բաշխված են հետեւյալ կերպ՝ 70%-ը ոչկանում է հայկական, 30%-ը հունական կողմին:

Ըստ «Գրանտ տոբակոյի» նախագահ Հրանտ Վարդանյանի, «Մասիս տոբակոյի» ստեղծումը միայն սկիզբն է այն բիզնես ծրագրի, որը մինչեւ կատելու է 5 պետություն՝ Հայաստան, Իրան, Վրաստան, Ռուսաստան եւ Հունաստան: Հավանաբար դա նկատի ունենալով, բացման արարողության ժամանակ իր ելույթի մեջ Հրանտ Վարդանյանը հայտարարեց, որ 2-3 տարի հետո կբացվեն 2-րդ, 3-րդ նմանատիպ գործարանները: Նա հատուկ շնորհակալություն հայտնեց Հայաստանի նախագահին, տեղեկացնելով, որ 3 տարի առաջ, երբ իրենք նոր էին սկսել «Գրանտ տոբակոյի» հիմնադրման աշխատանքները, ստացել են այն ժամանակ վարչապետ Ռոբերտ Քոչարյանի աջակցությունը: Վերջինս իր ելույթը սկսեց Կոթի գյուղի գյուղապետի կողմից Հրանտ Վարդանյանին այդ գյուղի «պատվավոր քաղաքացի» հայտարարելու փաստով: Այդ առիթով նա խոստովանեց, որ իմացավ եւս մեկ նորություն: Կոթի գյուղը երկու հայտնի գյուղացի ունի (նկատի ունի Վանո Սիրադեղյանին): Շարունակելով հումորով սկսած ելույթը, նախագահը կոչ արեց ծխախոտագործությամբ զբաղվել, բայց չծխել: Ելույթի լուրջ մասում Ռոբերտ Քոչարյանը կարեւորելով «Մասիս Տոբակոյի» գործարկումը, ընդգծեց, որ բացի վերոհիշյալ 1200 աշխատատեղից, առնվազն 8-10 հազար աշխատատեղ է ապահովվում գյուղում, ինչն իր համար ամենաուրախալին էր: Նախագահը չմոռացավ վերստին անդրադառնալ «Նվնվոցներին», նշելով, որ դրանցով չեն «երկրում եւ բիզնեսում հաջողությունների հասնում», այլ աշխատանքով, ջանքեր գործադրելով եւ ոիսկի դիմելով: Իսկ յուրաքանչյուր նոր աշխատատեղեր ստեղծող նախաձեռնությանը նախագահն իր եւ կառավարության անվերապահ աջակցությունը խոստացավ: Շնորհավորելով բոլորին, Ռոբերտ Քոչարյանը Դավիթաշենի կամրջի բացումից հետո երկրորդ անգամ շնորհավորեց նաեւ «անձամբ» իրեն, չնայած «Մասիս տոբակոն» նրա նախընտրական խոստումների մեջ չէր մտնում:

«Միսիրյան» ընկերության նախագահ Ռոբերտ Միսիրյանի ելույթից, վաս թարգմանության պատճառով թերեւս հասկանալի էր միայն այն, որ նա եւս ոգեւորված էր ձեռնարկության ստեղծմամբ եւ իր շնորհակալությունն ու շնորհավորանքներն էր հայտնում իր գործընկերներին: Իսկ ընկերությունն, իրոք, ճանաչված անուն է միջազգային շուկայում: 1880 թ. Սասունից Բելգիա գաղթած Միսիրյանները սկսեցին զբաղվել ծխախոտի հումքի առեւտրով: 1902 թ.-ին հիմնվեց «Միսիրյան եղբայրներ» ընկերությունը եւ իր գործարանները բացեց Բուլղարիայում եւ Հունաստանում: Տարիներ շարունակ Միսիրյանները ծխախոտահումք էին մատակարարում աշխարհի հայտնի ծխախոտագործական ձեռնարկություններին եւ այսուհետ պատվիրատուներին կառաջարկի նաեւ հայկական ծխախոտահումքը:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ «Մասիս տոբակոյի» գործարկմամբ Հայաստանի արտադրության ոլորտի զարգացման հերթական քայլն արվեց, ինչն անշուշտ միայն ողջունել է պետք:

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կարեւորը չխանգարելն է

Տնտեսության առանձին ճյուղերի մասին ասում է ՀՀ նախագահը

«Մասիս տոբակոյի» բացման արարողությանն այցելած նախագահ Ռոբերտ Քոչարյանին ուղղված լրագրողների հարցերն առնչվում էին նախատեսվող ներդրումային ծրագրերին եւ նոր աշխատատեղերի բացման հնարավորություններին:

– Ինչպե՞ս եք գնահատում նոր աշխատատեղերի բացման հնարավորությունները հանրապետությունում:

– Ծրագրեր շատ կան, բայց այնպես չի լինելու, որ պետությունն ինքը սկսի աշխատատեղեր ստեղծել: Դա կլինի ոչ ռացիոնալ եւ ամենասխալ տարբերակը: Կփորձենք աջակցել այն գործարարներին, որոնք ծրագրեր ունեն եւ պատրաստ են իրագործել: Հայաստանում մեծ վարկային ռեսուրսներ արդեն կան: Միայն Լինսի հիմնադրամի միջոցով 19 մլն դոլարի ծրագրեր են հաստատվել, իսկ ընդհանուր առմամբ այդ ռեսուրսները հասնում են 75 մլն դոլարի: Դուք տեսնում եք միայն խոշոր ծրագրերը, բայց կան նաեւ բազմաթիվ փոքր ծրագրեր 20-40 աշխատատեղերով, որոնք չեն նկատվում, բայց ժամանակի առումով իրենց ազդեցությունը տնտեսության մեջ ունենալու են: Հաջորդը՝ դրսի խոշոր ներդնողներին Հայաստան հրավիրելու համար եւս աշխատում ենք:

– Արդյունաբերության ո՞ր ճյուղերի վրա կարելի է հույս դնել այսօր:

– Ճյուղեր կան, որոնք արդեն գնում են ավտոմիլոցի ռեժիմով: Պետք է միայն չխանգարել: Դրանք են ոսկերչությունը, թանկարժեք քարերի մշակումը: Հարկային դաշտն այստեղ այնպես է ձեւավորվել, որ խթանում է այս ճյուղերի զարգացումը: Այլուսը սննդամթերքի վերամշակման արդյունաբերությունն է, որի վարկային ռեսուրսների առկայության դեպքում եւս ամենակարեւորը չխանգարելն է: Նույնը նաեւ ծխախոտագործությունը: Երկու տարի առաջ աջակցության լուրջ խնդիր այստեղ կար: Սպասարկման ծառայությունների մակարդակն այստեղ բավական բարձր է, դրսի մարդիկ դա տեսնում են առաջին իսկ օրից: Այստեղ եւս կարեւորը չխանգարելն է: Բարենպաստ հարկային դաշտ եւ ինչքան հնարավոր է պետական մարմինների հիչ միջամտություն: Պետության աջակցության կարիքը կա հիմնադրման եւ լեռնամետալուրգիայում: Այստեղ դեռ չկան համապատասխան պայմաններ կազմված եւ հարկային դաշտի, եւ վարչարարական խնդիրների հետ:

– Այդ ամենի համար Ձեր կարծիքով Հայաստանում քաղաքական կայունությո՞ւն է տիրում:

– Ազգովին սոխակի պես երգենք էլ ներդնողներին հրավիրելու համար, դա չի լինի, եթե երկրի քաղաքական կայունությունն ապահովված չէ: Դա առաջին հերթին: Եթե կան ուժեր, որոնք հակառակն են քարոզում, դա եւս բնական քայլ եմ համարում այս պահին Հայաստանի համար: Ես համոզված եմ, որ քաղաքական իրավիճակը կայուն է: Երկրորդը, որը եւս շատ կարեւոր է, մակրոտնտեսական կայունությունն է: Այնուհետեւ՝ բարենպաստ հարկային դաշտ, վարչարարություն եւ այլն:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ալավերդու պղնձաձուլականի 4-րդ ծնունդը

Մասնագետների կարծիքով դա տնտեսական հրաշք է

Շաբաթ օրը, նոյեմբերի 18-ին Ալավերդիում նշվեց պղնձաձուլական գործարանի 230-ամյակը: Տեղի ունեցավ նաեւ այդ առիթով կառուցվելիք եկեղեցու հիմնարկեքը: Եկեղեցու շինարարությունը հովանավորում են «Մանես եւ Վալեխի» բաժնետերերը: Հայաստանի ամենահին գործարանը՝ Ալավերդու պղնձաձուլականը, 1770 թվականից ի վեր դադարեցրել է իր աշխատանքը 4 անգամ: Վերջին ուրախությամբ դադարը 1989 թվականին էր, երբ գործարանը լուծարվեց, հազարավոր մարդիկ զրկվեցին աշխատատեղերից: Վերջին դադարը կարող էր դառնալ իսկապես վերջինը ոչ միայն ավանդույթներ ու պատմություն ունեցող այս հսկա արդյունաբերական օբյեկտի, այլեւ Ալավերդի քաղաքի համար, եթե 1997 թվականին չստեղծվեր «Մանես եւ Վալեխ» ընկերությունը:

Հիշեցնենք, որ «Մանես եւ Վալեխի» մետալուրգիական արտադրամասի երկրորդ գործարկումը տեղի ունեցավ այս տարվա փետրվարին: Գործարանի տնտեսական ցուցանիշների ամփոփ տեղեկագիրն այսօր այսպիսին է. գործարանի բանվորների թիվը հասել է 512-ի՝ 75 հազ. դրամ աշխատավարձով: Մինչեւ նոյեմբերի 19-ը գործարանն արտադրել ու իրացրել է 6012 տոննա չզտված (սեւ) պղինձ՝ 5215 մլն դրամ արժողությամբ: Վերագործարկումից հետո գործարանն աշխատում է մոտ 140 մլն դրամի շահույթով: Բաժնետերերի հարաբերակցությունը այսօրվա դրությամբ այսպիսին է՝ 46,3 տոկոսը պատկանում է զվեյցարական «Էլեկոմ Է.Գ.»-ին եւ 53,7 տոկոսը՝ Լյուքսեմբուրգյան «Վալեխ» ընկերությանը, որի մոսկովյան ներկայացուցիչն է «Մանես եւ Վալեխ» ՓԲԸ նախագահ Վալերի Մեջլումյանը: Մինչ այժմ «Վալեխի» կողմից կատարվել են 3 մլն ԱՄՆ դոլարի ներդրումներ: Այս տարի ծեռնարկությունը պետքյուջե է մուծել 81,5 մլն դրամ, չունի պարտքեր ոչ բյուջեին եւ ոչ էլ կենսաթոշակային հիմնադրամին: Ձեռնարկության վերագործարկման դրական ազդեցությունն Ալավերդու վրա արդեն շոշափելի է: Այդ են վկայում ոչ միայն բնակիչները, այլեւ՝ թվերը. այսպես, քաղաքային իշխանությունների խնդրանքով ավանսային կարգով մոտ 3 մլն հողի ու գույքի հարկ է փոխանցվել քաղաքի բյուջեին, նույնքան էլ՝ շաբաթօրյա տոնակատարության առիթով բարեկարգման աշխատանքներ իրականացնելու համար: Բացի այդ՝ 3 մլն դրամ տրամադրվել է քաղաքի բարեգործական ճաշարանին, 5 մլն՝ քաղաքի ասֆալտապատմանը, 2 մլն առողջապահության, կուլտուրայի եւ սպորտի օջախներին, 0,6 մլն մարզային ու քաղաքային թերթերին, նույնքան էլ՝ պատերազմի վետերաններին:

«Եթե մի քանի տարի էլ պղնձի գործարանը չաշխատեր, Ալավերդուց կմնային միայն դատարկ շենքերը», սատեղացիների թերեւս սուբյեկտիվ, մի փոքր էլ չափազանցված կարծիքն է գործարանի վերջին վերագործարկման մասին, իսկ մասնագետների առավել օբյեկտիվ կարծիքով, Ալավերդու պղնձաձուլականի վերագործարկումը, եւ եթե հաջողվի նաեւ այդ գործարանի բազայի վրա ստեղծվելիք հզոր մետալուրգիական համալիրի հիմնումը, կլուծվի միաժամանակ մի քանի կարեւոր խնդիր՝ կբարելավվի ժողովրդի սոցիալական վիճակը, հազարավոր գործազուրկներ աշխատանք կստանան, կզարգանա ՀՀ-ի համար առաջնային արդյունաբերական ճյուղերից մեկը՝ լեռնամետալուրգիան, ինչը նաեւ Հայաստանի համար ռազմավարական կարեւորության հարց է:

ՀՀ վիճակագրության տվյալներով Ալավերդին իր մոտ 35 հազ. բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտներով ամենաաղքատ քաղաքն է Հայաստանում: Իսկ ոչ պատշաճական վիճակագրության համաձայն՝ ամենաարտագաղթող բնակավայրը: Այդ էր թերեւս պատճառը, որ շաբաթ օրվա տոնի առիթով գործարանին կից հրապարակում հավաքված ալավերդցիները մայրաքաղաքից ժամանած պատվիրակությանն ու լրագրողներին դիմավորեցին թերահավատությամբ ու նաեւ՝ մի փոքր քարկությամբ: «Ի՞նչ հույսեր եք կապում գործարանի վերաբացման հետ» հարցին հետեւեց լոռեցուն բնորոշ միամիտ ու անկեղծ պատասխանը՝ «հու՞յս է մնացել, որ հիմա էլ՝ ի՞նչ հույս»: Մարդիկ հիմնականում դժգոհ էին երկրիս իշխանություններից. «Մեզ անտեր են թողել» խոսքերը ակամա հիշեցրին հայտնի լոռեցու, ամենայն հայոց բանաստեղծի «Հառաչանք» պոեմը. «Մեր ուզածն ի՞նչ է, մի կտոր չոր հաց, էն էլ հրեն, հա, երկնից կախված»: Իսկ որ քաղաքն ամենածանր սոցիալական վիճակում է հայտնվել, կարելի էր համոզվել, ընդամենը մի քանի ժամ շրջելով նրա գլխավոր փողոցներով: Քաղաքացիների սոցիալական վիճակն այնքան ծանր է, որ ինչպես կատակում էին քաղաքացիները, անգամ ավտոտեսուչներն են սկսել «նիսիայով» տուգանքների ցուցակով աշխատել: Զրուցակիցներիս պնդմամբ, քաղաքը կիսով չափ դատարկվել է: Պղնձաձուլականի 47 տարվա բանվոր Գրիգոր Հարությունյանի վկայությամբ իրենց շենքի 32 բնակարաններից 8-ի դռները մշտապես փակ են՝ կենվորների բացակայության պատճառով, 7-ում ապրում են միայն ծերունիներ, իսկ մնացածներում ապրող բնակիչներն էլ մի կերպ քարշ են տալիս իրենց գոյությունը: Ալավերդցի մյուս զրուցակիցս, Սեյրան Լալայանը, որը 25 տարի աշխատել է պղնձաձուլականում, հավաստացնում էր, որ իրենց 7 հոգանոց ընտանիքը ապրում է միայն իր ու կնոջ թոշակով: Թե վերջին թոշակը ե՞րբ են ստացել, զրուցակիցս այդպես էլ չկարողացավ հիշել: «Լավ, այդ դեպքում ինչպե՞ս եք ապրում» հարցիս հետեւեց միամիտ պատասխանը՝ հրաշքով: Ինչ վերաբերում է հրաշքներին, ապա ալավերդցիները շարունակում են հավատալ դրանց: Նրանցից շատերի համար հիմնահատակ ավերված ու անտերության մատնված «Պղնձի գործարանի» վերաբացումը նույնպես հրաշք էր, որն այսօր իրականություն է դարձել:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐՈՅԱՆ



«Մանես եւ Վալեխ»-ի նախագահ Վ. Մեջլումյանը գործարանի 4 բանվորներին հանձնեց ՀՀ նախագահի պարգեւները ու նվերները զվեյցարական ժամացույցներ:

ԱԶԳ

Միջազգային

Վաշինգտոնը երկարաձգեց Թեհրանի դեմ սահմանված բեռնարգելքները

Նոյեմբերի 9-ին ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնը Կոնգրեսին հղած ուղերձով տեղեկացրեց, որ Իրանի դեմ սահմանված տնտեսական բեռնարգելքները մեկ տարով երկարաձգել է: Իրանի ԱԳ նախարարությունը բացասաբար արձագանքելով Քլինթոնի քայլը ի վնաս ԱՄՆ ընկերությունների է գնահատել:

Ինչպես հայտնի է, 1979 թ. նոյեմբերի 4-ին «Իմամի ուղղության հետևորդներ» կոչվող իրանցի մի խումբ ուսանողներ դիմեցին աննախադեպ քայլի գրավեցին Թեհրանում ԱՄՆ դեսպանատունը դատանդ վերցնելով 52 աշխատակիցների: 4 օր անց Վաշինգտոնը դադարեցրեց ռազմական տեխնիկայի պահեստամասերի առաքումը Իրան, ապա ԱՄՆ նախագահ Ջիմի Քարտերն արգելեց իրանական նավթի ներմուծումը ուրջ 3 մլրդի վնաս պատճառելով Իրանին: Այնուհետև առ այսօր յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 9-ին մեկ տարով երկարաձգվել է Իրանի դեմ կիրառված էմբարգոն, որը հետագայում ավելի լայնածավալ բնույթ կրեց: Նույն թվականի նոյեմբերի 14-ին ԱՄՆ նախագահի հրամանով ամերիկյան բոլոր բանկերում եւ դրանց դրսի մասնաճյուղերում Իրանի բանկային հաշիվները սառեցվեցին, որը շարունակվում է առ այսօր:

1995 թ. մայիսի 8-ին նախագահ Քլինթոնը ստորագրեց Իրանի նկատմամբ տնտեսական լիակատար բեռնարգելքի կիրառման հրաման: Ամերիկյան ընկերություններն ու կազմակերպությունները, որոնք առեւտրական տարբեր պայմանագրեր էին կնքել Իրանի հետ, դրանք չեղյալ հայտարարեցին: 1996 թ. օգոստոսին ԱՄՆ-ում, նախագահական ընտրարշավի պայմաններում, Կոնգրեսը հաստատեց պարտադիր կիրառման մի օրենք, որը օրինագծի հեղինակ, հանրապետական սենատոր Ալֆոնս դ'Ամատոյի անվամբ կոչվեց դ'Ամատոյի օրենք: Ըստ որի ԱՄՆ-ը պատժամիջոցներ է կիրառելու ոչ ամերիկյան այն ընկերությունների դեմ, որոնք Իրանի նավթի եւ գազի ոլորտներում տարեկան ավելի քան 20 միլոն դոլար ներդրում կկատարեն:

Այսուհանդերձ, վերջին տարիներին կողմերը, առավելապես Վաշինգտոնը, որոշ քայլեր են կատարում ԱՄՆ-Իրան կապերի բարելավման համար, այդ թվում, 1999 թ. թեեւ խիստ սահմանափակ, բայց եւ այնպես Վաշինգտոնը վերացրեց իրանական որոշ ապրանքների ներմուծման եւ ամերիկյանի արտահանման արգելքը: Ահա թե ինչու Իրանի դեմ սահմանված էմբարգոյի երկարաձգումը գնահատվեց կողմերի բարելավման դրսեւորումներին հակասող քայլ: Երբեմն էլ որակվում է որպես Թեհրան-Վաշինգտոն փոխհարաբերությունների ասիճանաբար բարելավման գործընթացի տարալում: Սակայն իրականում ի սկզբանե թե ԱՄՆ-ում եւ թե Իրանում երկու երկրների կապերի բարելավմանը դեմ են հզոր ուժեր, որոնք արգելակում են գործընթացը հետեւաբար այն շարունակվելու է զգալի ելեւէջներով:

Նշենք նաեւ, որ եթե 1999 թ. Իրանի դեմ բեռնարգելքների հերթական երկարացումը փորձագետները պայմանավորում էին Իրանի խորհրդարանական ընտրությունների արդյունքներով, ապա այժմ ենթադրվում է, որ ԱՄՆ նոր նախագահն Իրանի հարցին անդրադառնալու է լավագույն դեպքում նախագահությունն սանձնելուց 5-6 ամիս հետո: Ժամանակահատված, որը համընկնելու է Իրանում նախագահական ընտրարշավին, ասել է թե ԱՄՆ-ի քայլերը երկու երկրների փոխհարաբերությունների բարելավման ուղղությամբ եթե էական չլինեն, դրական արձագանքի չեն արժանանա, իսկ էական քայլերի Վաշինգտոնը հազիվ թե դիմի, առանց Իրանի հետ որեւէ հարցում պայմանավորվածություն ձեռք բերելու:

ԷՄՄԱ ԲԵԳԻՋԱՆՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆ

Ձերբակալվել են Շեկի քաղաքի զանգվածային անկարգությունների մասնակիցներ

ԲԱԿՈՒ, 20 ՆՈՅԵՄԲԵՐ, ՍՆՍՐՔ- Նոյեմբերի 18-ին Բաքվից 400 կմ հյուսիս-արեւմուտք գտնվող Շեկի քաղաքում զանգվածային անկարգություններ են տեղի ունեցել: Անկարգությունների պատճառ են դարձել տեղի բնակիչների խմբի եւ ոստիկանության միջեւ տեղի ունեցած բախումները: Վերջին մի քանի օրվա ընթացքում Շեկիի բնակչությունը բողոքի ցույցեր է անցկացրել՝ պահանջելով ազատել գազի եւ էլեկտրականության մատակարարումը, սակայն այդ փորձերը կասեցվել են ոստիկանության կողմից:

Ադրբեջանի ՆԳՆ հաղորդմամբ, բողոքի ցույցը նախաձեռնվել է «Մուսավաթ» եւ Ազգային անկախության կուսակցությունների ընդդիմադիրների կողմից: Նույն աղբյուրը հաղորդում է, որ ցույցն ուղեկցվել է ապօրինի կարգախոսներով, ցուցարարները քարեր եւ այլ առարկաներ են նետել ոստիկանների վրա: Բախման ընթացքում վիրավորվել է ոստիկանության 15 աշխատակից:

Այլ աղբյուրների համաձայն, բախումները Շեկիում շարունակվել են նոյեմբերի 18-ի ամբողջ երեկոյի ընթացքում, եւ երկու կողմերից էլ տասնյակ տուժածներ կան: Ոստիկանությունը ձերբակալել է բողոքի ցույցի մի քանի մասնակցի, սակայն ցուցարարները շրջափակել են ՆԳՎ եւ գործադիր իշխանության շենքը՝ պահանջելով ազատ արձակել նրանց: Հակամարտությունը շարունակվել է մինչեւ գիշեր, քանի դեռ քաղաք չի ժամանել Գյանջայի ներքին գործերի գունդը:

Շեկի քաղաքի դատախազի հաղորդմամբ, նոյեմբերի 20-ի առավոտյան ձերբակալվել է շաբաթ օրը կայացած բողոքի ցույցի 25 մասնակից, զանգվածային անկարգությունների փաստի առնչությամբ քրեական գործ է հարուցվել:

Ներկայումս քաղաքի իրավիճակը կայուն է եւ վերահսկվում է իշխանությունների կողմից:

Ընդդիմությունը նոր ընտրություններ անցկացնելու կոչ է անում

ԲԱԿՈՒ, 20 ՆՈՅԵՄԲԵՐ, ՍՆՍՐՔ- Ադրբեջանական ընդդիմության առաջնորդներն անցած շաբաթ օրը կայացած հանրահավաքում երկրի քաղաքացիներին կոչ են արել համախմբվել նոյեմբերի 5-ի խորհրդարանական ընտրությունները չճանաչելու եւ նոր խորհրդարանական ընտրություններ անցկացնելու գաղափարի շուրջ: Հանրահավաքի ժամանակ հնչել են նաեւ երկրի ղեկավարության հրաժարականի վերաբերյալ պահանջներ:

Բաքվում կայացած հանրահավաքին մասնակցել է 10-15 հազար մարդ: Իրավակարգի ապահովման համար ներգրավվել են ավելի քան 500 ներքին գործերի ծառայողներ եւ ոստիկաններ: Հանրահավաքներ են տեղի ունեցել նաեւ Գյանջա, Ջաբրաիլ, Աղդաշ եւ այլ քաղաքներում:

Միքայել Արամյանցի կյանքի գաղտնի ծալքերը

Աշխարհով մեկ ցրված հայ գաղթօջախներից մեկն էլ Թիֆլիսն է, որը լի է մեր արարչական էության արտահայտություններով: Այստեղ ամեն քար, փողոց կամ շենք ունի իր յուրատեսակ պատմությունը:

Ուշադրության է արժանի հայտնի նավթարդյունաբերող, բարեգործ, տիմական պատվավոր քաղաքացի Միքայել Հովսեփի Արամյանցի Թիֆլիսում ունեցած սեփականություններից մեկը Օլգինսկայա (այժմ Կոստավայի անվ.) փողոցի թիվ 12 տունն իր ամբողջ կալվածքով: Էլ չենք ասում նրա անթառամ փառքի մասին. 1910 թվին իր կառուցած հիվանդանոցը, որը մինչեւ օրս ժողովրդի մեջ հայտնի է որպես Արամյանցի հիվանդանոց, հիասքանչ «Մաժեստիկ» հյուրանոցը, որն այժմ կոչվում է «Թբիլիսի» եւ քաղաքը զարդարող այլ գոհարներ: Ոչ պակաս կարեւոր արժեք ունի նաեւ վերը նշված շինությունը, որը նման է մի դրախտային անկյունի՝ բաց երկնքի տակ, այգի ոլորապտույտ անցումով, դեկորատիվ շարվածքով, ավազան երկու շքեղ առանձնատների արանքում:

Այդ կալվածքը Արամյանցը նվիրել էր իր գեղեցկուհի սիրուհուն Եվգենյա Շիյանցին (ծնյալ Սակարյան) 1904 թ.: Մի տարի հետո նվիրյալ երկրպագուն կառուցեց երկհարկանի տուն կալվածքի հարավային ծայրամասում (անանուն փակուղուն հարող), որի նախագիծը կազմել էր ճանաչված ինժեներ Պողոս Զուրաբյանցը 1905 թ.:

Միքայելն արդեն վաղուց էր գաղտնի հանդիպում Եվգենյայի հետ, որին եւ շրջապատեց կատարյալ հարմարավետությամբ՝ չխնայելով ոչինչ: Նրանց մտերմության 14-րդ տարում՝ 1908 թվին, քաղաքեղից վախճանվեց Եվգենյան: Մի դասական գործին նվիրված հոդվածում (1910 թ., 200, էջ 3), որի վերնագիրն է «Բժկապետ Հախվերդյանի գործը», «Մշակ» օրաթերթը անդրադառնում է այդ ամենին:

Միքայել Արամյանց

Եվգենյա Շիյանց

Սիրուհու մահը ծանր հարված էր Արամյանցի համար, նա չցանկացավ կտրվել այդ կալվածքից եւ որոշեց վերածել հուշարձանի: Սկզբում կառուցեց կեղծ գոթական ոճով մյուս առանձնատունը (Օլգինսկայա փողոցին հարող), որի նախագիծը կազմել էր ճարտարապետ Ա. Օզերովը 1910 թ. մարտի 3-ին: Հետագայում՝ 1911 եւ ապա 1913 թվերին կից կառույցներ շինեց դիմացի՝ մյուս տանը, եւ մի փոքր էլ վերակառուցեց այդ շենքը (դրանց նախագծերը նմանապես կազմել էր Ա. Օզերովը):

Օլգինսկայա փողոցին հարող Արամյանցի առանձնատներից մեկը

Քաղաքի իշխանություններն էլ բարեհաճ գտնվեցին եւ վերը հիշված հարավային ծայրամասի տանը հարող անանուն փակուղին, որը դուրս է գալիս՝ Իզմայլովսկայա փողոց (այժմ՝ Զանդուկելի), անվանեցին «Եվգենիեւսկի» (այսօր կոչվում է Զանդուկելիի փակուղի): Արամյանցն ընդհանրապես հակում ուներ գեղեցիկի ու արվեստի նկատմամբ եւ իր տները, կահույքը զարդարում էր կենդանիների ֆիգուրներով:

Ի դեմ, ինչպես ժամանակին պատմում էին Արամյանցի հետնորդները, ներկայիս կալվածքի բակում կանգնած էր նաեւ բրոնզե եղջերուների կոմպոզիցիոն քանդակը, որը բերել էր Փարիզից: 1930-ական թթ., երբ քաղաքի նոր իշխանությունները Սոլոլակ լեռան երկարությամբ կառուցեցին «Կոմերիսական պուրակը», չգիտես ինչու, արձանը տեղափոխեցին այդտեղ:

Ցավոք, բառացիորեն վերջերս խուլիգաններն կողոպտեցին ու ավերեցին այդ գեղեցիկ արձանը որպես գունավոր մետաղ դրսում վաճառելու նպատակով:

ՍԱՐԳԻՍ ԳԱՐՅԻԼՅԱՆ

Մշակույթ

Երջանկություն եւ տառապանք

Ժասմեն Ասրյանի դիմանկարի ուրվագծեր

Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի արտիստուհի Ժասմեն Ասրյանը սերում է Խայենի մեծ իշխան Հասան-Ջալալյանների տոհմից. Իսաքան Բեկ Հասան Ջալալյանի ծոռնուհին է. Թատրոնի ճանապարհը նախանշել է հայրը Ֆրանսիայի Դիմադրական շարժման մասնակից ոտերիզան Հովհաննես Ասրյանը, որն Արցախի Վանք գյուղի մշակույթի տան վարիչն էր, շատ ներկայացումների բեմադրիչն ու գլխավոր դերակատարը.

Ժասմեն Ասրյանին հանդիսատեսը ծանոթ է Ուրանիայի («Հիմարից հիմարը»), Սյուզանի («Ուր սիրագորով կանայք»), Կարդուհու («Արեւը ձեզ հետ»), Գանկայի («Մանկական գազանանոց»), Նազիկի («Վերք Հայաստանի») եւ շատ ուրիշ դերակատարումներով. Երկու տասնամյակ աշխատում է Պարոնյանի անվան թատրոնում. Գրում է.

Դուրս եկավ թատրոնի գլխավոր մուտքից. Ոտքերը իր ելքը նկատելի լինի՞. Ոչ. (Դա ոտարզաոես շատ ցավալի կլիներ). Պարզապես փախչողի, հեռացողի տպավորություն չի ուզում թողնել. Ինչո՞ւ փախչի, ո՞ւր... Թատերագետ Եվարդ Ասատրյանը Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի ոեսական թատրոնում բեմադրված Գ. Ֆիգեյրեդոյի «Աղվեսն ու խաղողը» ներկայացման մասին ոիտի ասի. «Ժասմեն Ասրյանի Քլեյան կանացի է, կանացի կազմվածքով, ազնվականական ոլաստիկայով եւ կին զգացմունքների, մղումների ներքին հակասականությամբ, այդ հակասականության դրսեւորումների ոահերին իր ոոոքկուն անկեղծությամբ եւ ներամփոփումների ոահերին մտահոգ ու խաղաղ». Եվս մեկ կարեւոր նկատառում. «Նայելով Ասրյանի Քլեյային հավատում ես, որ դերասանուհին հարմարեցնում է իր խաղը ոչ թե տարբեր իրավիճակներին, այլ ոտարզաոես առում է իր հերոսուհու հարափոփոխ կյանքով եւ տարբեր իրավիճակներում նրա վարքը բխեցնում է կերոարի էությունից, գրեթե հավատարոես հանոգիչ ու անկեղծ է իր Քլեյայի բոլոր դրսեւորումները մարմնավորելիս...». Գրականագետ Աբգար Ափինյանն ուրիշ խոսքով է հաստատում թատերագետի միտքը. «Կոմեդիայի իսկական հարստությունն է Ժասմեն Ասրյանի Քլեյան. Այս կերոարը փրկում է կոմեդիան բառոյախոտական միակողմանիությունից, վերադարձնում է մեզ դեոի կյանք. Թեոեն դերասանուհու խաղից դժվար չէ եզրակացնել, որ նրան հարազատ են բոլոր դերերը. Նրա մեջ զոոոս» ոիեսի բեմադրությունում Ժասմեն Ասրյանի խաղացած Քլեյայի մասին ոիտի ասի. «Ժասմեն Ասրյանի Քլեյան կանացի է, կանացի կազմվածքով, ազնվականական ոլաստիկայով եւ կին զգացմունքների, մղումների ներքին հակասականությամբ, այդ հակասականության դրսեւորումների ոահերին իր ոոոքկուն անկեղծությամբ եւ ներամփոփումների ոահերին մտահոգ ու խաղաղ». Եվս մեկ կարեւոր նկատառում. «Նայելով Ասրյանի Քլեյային հավատում ես, որ դերասանուհին հարմարեցնում է իր խաղը ոչ թե տարբեր իրավիճակներին, այլ ոտարզաոես առում է իր հերոսուհու հարափոփոխ կյանքով եւ տարբեր իրավիճակներում նրա վարքը բխեցնում է կերոարի էությունից, գրեթե հավատարոես հանոգիչ ու անկեղծ է իր Քլեյայի բոլոր դրսեւորումները մարմնավորելիս...». Գրականագետ Աբգար Ափինյանն ուրիշ խոսքով է հաստատում թատերագետի միտքը. «Կոմեդիայի իսկական հարստությունն է Ժասմեն Ասրյանի Քլեյան. Այս կերոարը փրկում է կոմեդիան բառոյախոտական միակողմանիությունից, վերադարձնում է մեզ դեոի կյանք. Թեոեն դերասանուհու խաղից դժվար չէ եզրակացնել, որ նրան հարազատ են բոլոր դերերը. Նրա մեջ ոոոտ է արտագրել բոլոր բառերը, հանգի կնոջ խորհրդավորությունը եւ հմայքը ծածկելու համար դարեր, հազարամյակներ շարունակ միայն մի բան արվեց. բառեր հնարել. Ու մենք մեր հիացմունքը կամ դաժանությունը ծածկում ենք հենց բառերով, խեղճուկրակ բառերով. Դա, իհարկե, արվում է նաեւ մեծագույն զգուշությամբ ու խնամով. Երաժշտությամբ. Բայց որքան թարգմանելի է կինը, նույնքան եւ երաժշտությունը.

Առ ավելին անում է լռությունը. Բայց այս մեծագույն արվեստին հասնելն անչափ դժվար է.

...Քայլեց փողոցներով. «Չվայելած երջանկության կորուստը ժամանակավոր տառապանք է, վայելած երջանկության կորուստը հավերժական տառապանք». Ո՞րն է երջանկությունը, կարո՞ղ ես ինձ բացատրել. Կարո՞ղ ես թվարկել այն բոլոր իրավիճակները, ուր դու երջանիկ ես զգացել ինքդ. «Սիրող կինը ոեալ չի կարող գնահատել իրական հարաբերությունների նշանակությունն ու իմաստը». Այսպես է անշուշտ. Բայց ես չեմ կարող հասկանալ այն երեւույթը, որը կարելի կլիներ կոչել «չսիրող կին». Կինը կարող է շատ ու շատ բաներ անել, բայց եթե նրա առածը հանուն սիրո չէ, ապա անիմաստ է դառնում նրան կին կոչելը. «Տղամարդիկ այնքան անխելք են, որ կարծում են, թե կանանցից խելոք են». Չէ, սիրելիս, այդպես չէ. ոչ մի կարգին տղամարդ իրեն կնոջից խելոք չի կարծել. Գուցե փորձել է ցույց տալ, երեւալ, բայց իրականում, իր հոգու հոգում այդպես չի մտածել. Դրա հարկն էլ չկա. «Կինը տղամարդուն ընդունում է խելքով, գնահատում առնական գեղեցկությամբ եւ ուժով...», ասում ես Դուք...

Պարզապես փորձում եմ զրուցել գրող Ժասմեն Ասրյանի հետ, որովհետեւ կինը գրիչ է վերցնում միայն այն ժամանակ, երբ աշխարհի հետ կապվելու բոլոր ծերերն արդեն անիմաստ են դարձնում արդեն նրա համար, երբ ինքնաբռնցահայտման բոլոր հնարները թույլ ու պակասավոր են երեւացել նրան. Դուք ասում եք, չէ՞. «Տղամարդը կնոջն ընդունում է կանացի գեղեցկության ուժով, գնահատում խելքով...».

...Valle...

ՄԵՐԳԵՑ ԳԱՍՊԱՐՅԱՆ

«Փոքրիկ վիրտուոզներ» Կանադայում եւ ԱՄՆ-ում

Հայ ավետարանչական ընկերակցության (ՀԱԸ) «Փոքրիկ վիրտուոզներ» անսամբլն արդեն լոոս տարեկան է. Ստեղծվել է ՀԱԸ-ի Հայաստանի ներկայացուցիչ Վեր. Ոընե Լեւոնյանի նախաձեռնությամբ, որը նաեւ անսամբլի տնօրենն է. Քառամյա գոյության ընթացքում եվրոոայի եւ Մերձավոր Արեւելքի մի շարք երկրներում (Ֆրանսիա, Անգլիա, Լիբանան, Սիրիա) ջերմ ընդունելության եւ բարձր գնահատականի արժանանալուց հետո շնորհալի ոատանիները այս հոկտեմբերին զարմացրին նաեւ ամերիկացի ու կանադացի հանդիսատեսին.

Անսամբլը՝ Մարինա Մանուկյան (դաշնամուր), Սյուզաննա Վարդանյան (ջութակ), Հռայլա Ավանեսյան (ջութակ), Սեւակ Ավանեսյան (թավջութակ), Լուսինե Աբաղյան (ջութակ), Լուսինե Մելիք-Վրթանեսյան (ֆլեյտա), 9-14 տարեկան երեխաներ, գերազանցեց արվեստասեր հանդիսատեսի տոասելիքը. Ի դեղ նշենք, որ անսամբլի բոլոր անդամներն էլ երեւանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի սաներ են, որի բազմաթիվ շրջանավարտներ հայտնի են ոչ միայն Հայաստանում, այլեւ աշխարհի բազմաթիվ երկրներում (անսամբլին նվագակցում էր դաշնակահարուհի Սոսխյա Ավանեսյանը).

– Մենք ենթադրում էինք, որ տաղանդավոր երեխաների ենք տեսնելու, բայց մեր տեսածն ավելին էր, Տորոնտոյում կայացած համերգից հետո ասել է կանադահայ ջութակահար, Կանադայի սիմֆոնիկ նվագախմբի դեկավար Նուրհան Արմանը.

Իսկ Դետրոյթում ունեցած համերգից հետո հաղաքաղաքը հայտարարել է, որ հոկտեմբերի 29-ը հայ փոքրիկ վիրտուոզների օրն է.

Մոնրեալ, Բոստոն, Դետրոյթ եւ Փրովիդենս հաղաքներում եւս նույն ընդունելությունն էր՝ ջերմ ու հիշարժան, իսկ դահլիճները լեփ-լեցուն էին.

– Մենք ուրախ ենք, որ մեր համերգներով ամերիկահայ ու կանադահայ ոատանիներին մեկ անգամ եւս հիշեցրինք, որ իրենք հայ են, եւ իրենցն են «Կախվիկն» ու «Կռունկը», Սայաթ-Նովան ու Բաբաջանյանը, ասում է «Փոքրիկ վիրտուոզների» գեղարվեստական ղեկավար Սամվել Ավանեսյանը.

Համերգների ծրագիրն ընդգրկում էր եւ հայ, եւ եվրոոայի երգահան-կոմպոզիտորների ստեղծագործություններ՝ Կոմիտաս, Սայաթ-Նովա, Եկմալյան, Արամ Խաչատրյան, Ակ. Հարությունյան, Արմեն Տիգրանյան, Սոնո Բաբաջանյան, Սարասատ, Վիվալդի, Ռավել, Դվորժակ, Վենյավսկի. Այս շրջագայությունը վիրտուոզների համար ունեցավ նաեւ ճանաչողական նշանակություն՝ շփումն ամերիկացի եւ կանադացի արվեստագետների հետ, «Աղատություն» հուշարձանը Նյու Յորքում, Նիագարայի ջրվեժը եւ այլ տեսարժան վայրեր կմնան նրանց հիշողության մեջ՝ դառնալով հոգեւոր հարստություն.

Շրջագայության ընթացքում անսամբլին ուղեկցում էին ՀԱԸ-ի ներկայացուցիչներ Վեր. Ոընե Լեւոնյանը եւ Հարութ Ներսեսյանը.

Համերգներից ստացված ամբողջ հասույթն օգտագործելու է ՀԱԸ-ը՝ Հայաստանում իրականացվող կարիքավոր երեխաներին ուղղված բարեգործական ծրագրերում*.

Այս համերգների նախագիծը Հայ ավետարանչական ընկերակցության գործադիր տնօրեն վաղամեռիկ Վեր. Մովսես Ճանոոազյանինն էր, որի հիշատակին էլ նվիրված էին «Փոքրիկ վիրտուոզների» ելույթները.

Անսամբլի համերգները լայնորեն մեկնաբանվեցին կանադական, ամերիկյան մամուլով, հեռուստաընկերություններով եւ Հայաստանի ազգային հեռուստատեսությամբ.

** Մեր տեղեկություններով, ոչ թե ամբողջ հասույթը, այլ դրա եկամուտներն են հատկացվելու բարեգործական նպատակների համար (խմբ.).*

ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՍՄԻԱ ԲԱՇԻՆ

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

«Այդպես հեշտությամբ իմ հարցը չեն կարող լուծել»

Ասում է Խորեն Աբրահամյանը

Թերթերը գրում են ամեն ինչի մասին, հեռուստատեսությունը եթեր է ուղարկում ամեն մի լուր՝ հավաստի, թե հնարովի. Երբ այլեւս ոչ մի տեղեկություն չի հաջողվում գտնել խաղախաղ ոռեւ գործչի կնոջ մասին, երբ հոգնում են մի ուրիշի միլիոն դոլարը հաշվել, առավել եւս՝ երբ աղմկահարույց դատավարություններ չկան, հրապարակ են հանվում արվեստի եւ մշակույթի գործիչները. Մի բան արած կլինեն, չէ՞. Արվեստագետն անընդհատ որոնումների մեջ է.



Եվ ահա կրկին գրվեց ու խոսվեց Խորեն Աբրահամյանի մասին, իբր նրան առաջարկվել է Ազգային օպերային թատրոնի գլխավոր ռեժիսորի աշխատանքը. Այնպիսի մանրամասնություններ են հաղորդվում, որ զարմանում ես այդ ժուռնալիստների հնարամտությունից. Իբր ՀՀ մշակույթի (նաեւ երիտասարդության հարցերի եւ սպորտի) նախարար Ռոլանդ Շառոյանը հրամանագիր է ստորագրել Խորեն Աբրահամյանին այս աշխատանքին նշանակելու մասին. Խորեն Աբրահամյանն էլ երիտասարդական կրքոտությամբ եւ մարզական հնարքներ բանեցնելով մտել է նախարարի աշխատասենյակը, արվեստավարժորեն պատռել է հրամանագիրը եւ գնացել տուն. Փորձեցինք այս ամենը ճշտել իրենից՝ Խորեն Աբրահամյանից.

– Այդպիսի առաջարկ եղել է նախարարի կողմից, ասաց արտիստը, որի համար շատ շնորհակալ եմ. Լավ է, որ իմ մասին մտածում են. Բայց ես չեմ ընդունել առաջարկը. Եվ չեմ էլ ընդունելու. Այդպես հեշտ չեն կարող իմ հարցը լուծել.

– Որեւէ հանգամանք, որեւէ պատճառ դե՞ր է խաղացել հրաժարականի համար.

– Իհարկե, մանրամասներ կան. Սակայն ուզում եմ հիշել Մարկ Տվենի օրինակը. մի ժամանակ բոլոր թերթերն սկսում են գրել, որ Մարկ Տվենը մահացել է. Ինքը՝ մեծ գրողը նամակ է ուղարկում խմբագրություններին. «Իմ մահվան մասին լուրերը խիստ չափազանցված են».

Ս. Գ.

Նորանշանակ գլխավոր դիրիժորի ղեկավարությամբ

Նոյեմբերի 19-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում կայացավ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի անդրանիկ համերգը՝ նորանշանակ գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ. Էդուարդ Թոփչյանը, որը Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի 18-րդ գլխավոր դիրիժորն է, 1928 թ. Երեւանի կոնսերվատորիայի սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժորի պարտականությունը ստանձնած 28-ամյա Սուրեն Չարեֆյանից հետո երկրորդն է, որ այդքան երիտասարդ տարիքում (29 տ.) հանձն առավ նման պատվավոր եւ պատասխանատու պաշտոնը. Նա եղել է 1991 թ. հիմնադրված «Սերենադ» կամերային նվագախմբի գեղարվեստական ղեկավարն ու դիրիժորը.

Համերգի ընթացքում հնչեցին Պ. Ի. Չայկովսկու (Հայաստանում կատարվեց առաջին անգամ) «Փոքրիկ» ֆանտազիան, Յ. Բրամսի թիվ 1 սիմֆոնիան, Մաքս Բրուխի ջութակի եւ նվագախմբի թիվ 1 կոնցերտը.

Երիտասարդ, տաղանդավոր ջութակահարուհի Միքիլլե Չոփիը, որ նշանավոր նվագախմբերի հետ մենահամերգներով հանդես է եկել Եվրոոայի, ԱՄՆ-ի, Հարավային Աֆրիկայի հաղաքներում, մասնակցել միջազգային փառատոների, հանդիսականին հիացրեց Մաքս Բրուխի ջութակի կոնցերտի բարձրարվեստ, նոր կատարումով.

Նորանշանակ մաեստրոյի ղեկավարությամբ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգն անցավ հաջողությամբ՝ արժանանալով երաժշտասեր հանդիսականի բարձր գնահատանքին.

Մ. Բ.

Նոր հեքիաթներ են ծնվում

Արմեն Բոդոյանը սովորում է Երեւանի թիվ 6 միջնակարգ դպրոցում. Մայրն ու վրձինը տակավին մանկական տարիքից եղել են նրա ուղեկիցները. Եվ ինչպես ամեն մի երեխայի առջեւ՝ շուայլորեն բացվել են հեքիաթի դռները. Այսօր 14-ամյա պատանին հաճախում է Խնկո Ապոր գրադարանի բաստրական խմբակը եւ իր պատրաստած տիկնիկներով արդեն իսկ բեւեռել է իր վրա մասնագետների ուշադրությունը. Արմենն իր տարիքի համեմատ լուրջ մասնագիտական ձեռքբերումներ ունի՝ ե՛ւ ձեռնոցային տիկնիկների, ե՛ւ ֆանդակ տիկնիկների պատրաստման գործում. Խմբակի ղեկավար, ճանաչված մասնագետ, Երեւանի տիկնիկային եւ Մարիոնետների թատրոնների երկարամյա նկարիչ-տիկնիկագործ Անահիտ Սոաֆելյանը, նշելով, որ խմբակում շատ շնորհալի երեխաներ կան, առանձնակի շեշտադրում է Արմեն Բոդոյանի աշխատանքները, որոնք այլի են ընկնում կերպարային վառ բնութագրությամբ, ճաշակով, խոսուն են եւ գրավիչ թե՛ փոքրերի, թե՛ մեծերի համար.

Ն. Ք.

Մարզական

ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍ

Ինդիրա Գանդիի հուշամրցաշարն ավարտվեց բարեկամության հաղթանակով

«Հնդկաստանի մայր», հայ ժողովրդի մեծ բարեկամ Ինդիրա Գանդիի ծննդյան օրվա առթիվ Հայաստանում Հնդկաստանի դեսպանությունը, ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ համագործակցելով, կազմակերպել էր սեղանի թենիսի մեկօրյա մրցաշար: Դեսպան Բալ Անանդը սկզբում վստահություն հայտնեց, որ դիվանագետների եւ դեսպանությունների մյուս աշխատակիցների մինչեւ այս մարզական հանդիպումը կանցնի բարեկամության եւ օլիմպիական ոգու մթնոլորտում:

Կիրակի օրը, առավոտյան ժամը 10-ին ՀՀ արտաքին գործերի նախարարության, Հնդկաստանի, Գերմանիայի եւ Ռուսաստանի դեսպանությունների փոքր ռակետի վարպետները, նախ եւ առաջ «հավերժանալով» Ինդիրա Գանդիի ծաղկազարդ լուսանկարի առաջ, այնուհետեւ մարզական «բուռն» պայքար ծավալեցին «Հայաստան» մարզական միության (նախկին «Սպարտակ») մարզադահլիճի սեղանների առաջ: Երկու գլխավոր խմբերում եզրափակիչ հասնել կարողացան Առաքել Սեմերջյանը (ԱԳՆ), Ներսես Համբարձումյանը (Գերմանիայի դեսպանություն), Միխայիլ Վարդանյանը (ԱԳՆ) եւ, 40 տարվա ընդմիջումից հետո, դարձյալ հայկական սեղանի թենիսի «ծննդավայր» դահլիճում հանդես եկող Վահան Չարըխչյանը (ԱԳՆ-արարողակարգ): Վերջինս, պետական գործերով խիստ զբաղվածության պատճառով, չէր հասցրել նույնիսկ... մարզահագուստով խաղալ: Համենայն դեպս, մրցաշարի վճռորոշ փուլում մարզական բախտը ժպտաց նախկին սուղանահայ Առաքել Սեմերջյանին, իսկ 2-րդ եւ 3-րդ տեղերը գրավեցին համապատասխանաբար Ներսես Համբարձումյանը եւ Միխայիլ Վարդանյանը: Վահան Չարըխչյանը բավարարվեց 4-րդ տեղով:

Հիանալիորեն կազմակերպված այս մրցաշարի համար Հնդկաստանի դեսպան Բալ Անանդը ոչ միայն խորին շնորհակալություն հայտնեց մարզիչ Ֆելիքս Սարգսյանին եւ նրա տիկնոջը՝ Գոհար Խանգրաստյանին, այլեւ պարգեւատրեց ինչպես հաղթողներին, այնպես էլ կազմակերպիչներին: Ինչպես ինքն ասաց հանձնեց «նախնական» մրցանակներ: Նա խոստացավ, որ «վերջնական» մրցանակները Ինդիրա Գանդիի անվան մրցաշարին կհանձնի հանրապետության նախագահը:

Շնորհավորելով Հնդկաստանի դեսպանությանն այս նախաձեռնության համար հույս ենք հայտնում, որ օտարերկրյա դեսպանությունները կշարունակեն սեղանի թենիսի մրցումների անցկացման ավանդույթները:

ՀԱՄԼԵՏ ՄՈՍԿՈՖՅԱՆ

Մրցաշարի մասնակիցները Հնդկաստանի դեսպանի հետ

ՇԱԽՄԱՏ

Նարինե Գասպարյանը կարող է բարձունքներ նվաճել

Մարզասերներին արդեն հայտնի է, որ Երեւանում սեպտեմբեր ամսին անցկացված մինչեւ 20 տարեկանների աշխարհի առաջնությունում վանաձորցի 18-ամյա Նարինե Գասպարյանը լրացրեց միջազգային վարպետի նորման: Օրերս Սամբուլում անցկացված կոնգրեսում ՖԻԴԵ-ն միջազգային վարպետի կոչում շնորհեց նրան (ցիցս է, այդ կոչումը պայմանական է. Նարինեն պետք է իր վարկանիշը փոքր-ինչ բարձրացնի՝ այն հասցնելով 2200-ի):

Սա աննախադեպ երեւույթ է Լոռվա շախմատային պատմության մեջ: Օրերս Նարինեն եւ իր մարզիչը՝ սպորտի վարպետ Տիգրան Գյոզալյանը, հանդիպեցին լրագրողների եւ շախմատասերների հետ: Ըստ Տիգրան Գյոզալյանի, Նարինեն ունի իրական հնարավորություններ առաջիկայում լրացնելու նաեւ գրոսմայստերի նորմա: Մարզիչն ասաց, որ կային հնարավորություններ նաեւ մրցանակային տեղ գրավելու աշխարհի վերջին առաջնությունում, սակայն բացասական դեր խաղաց համակարգիչ չունենալը: Մարզիչն ու իր սանուհին չկարողացան ինչպես հարկն է ուսումնասիրել մրցակիցների խաղաոճը եւ ըստ այդմ նախապատրաստվել հանդիպումներին: Նա հույս հայտնեց, որ իշխանություններն ու գործարարները կօժանդակեն այս հարցում: Նարինեն չկարողացավ մասնակցել նոյեմբերին Իսպանիայում կայանալիք աշխարհի առաջնությանը՝ հովանավորներ չունենալու պատճառով:

Գյոզալյանն ու Գասպարյանը պատասխանեցին լրագրողների եւ շախմատասերների բազմազան հարցերին: Պատասխաններից կարելի է եզրակացնել, որ Նարինեն կարող է ավելի բարձր նվաճումներ ունենալ, եթե աղահովեն մարզիկի համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Վերջում Տիգրան Գյոզալյանը ցուցադրեց իր սանուհու խաղացած գեղեցիկ պարտիաներից մեկը:

ՄԱՐՍԵԼ ՄԻՔՈՅԱՆ

Ընտրական մրցաշարերում

Ֆուտբոլի աշխարհի 2002 թ. առաջնության եվրոպական երկու խմբերում ընտրական խաղեր անցկացվեցին:

Երկրորդ խմբում Կիպրոսի հավաքականը սեփական խաղադաշտում 5-0 հաշվով պարտության մատնեց Անդորրայի հավաքականին:

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Պորտուգալիա	3	2	1	0	6-2	7
2. Կիպրոս	3	2	0	1	8-6	6
3. Էստոնիա	4	2	0	2	4-6	6
4. Իռլանդիա	3	1	2	0	5-3	5
5. Հոլանդիա	3	1	1	1	6-4	4
6. Անդորրա	4	0	0	4	3-11	0

Անսպասելիորեն շաս համառ պայքարում ընթացավ **վեցերորդ** խմբի Սան Մարինո-Լատվիա հանդիպումը: Լատիշները միայն նվազագույն հաշվով՝ 1-0, կարողացան հաղթել մրցակից թիմին:

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Շոտլանդիա	3	2	1	0	4-1	7
2. Բելգիա	2	1	1	0	4-0	4
3. Լատվիա	3	1	0	2	1-5	3
4. Խորվաթիա	2	0	2	0	1-1	2
5. Սան Մարինո	2	0	0	2	0-3	0

Աշխարհի առաջնության ընտրական փուլի խմբային մրցաշարերն ավարտեցին ԿՈՆԿԱԿԱՖ-ի երկրների հավաքականները:

Ներկայացնենք վերջին տուրի խաղերի արդյունքներն ու մրցաշարային աղյուսակները:

Առաջին խումբ

Տրինիդադ եւ Տոբագո-Պանամա՝ 1-0
Կանադա-Մեխիկա՝ 0-0

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Տրինիդադ	6	5	0	1	14-7	15
2. Մեխիկա	6	4	1	1	17-2	13
3. Կանադա	6	1	2	3	1-8	5
4. Պանամա	6	0	1	5	1-16	1

Երկրորդ խումբ

Սալվադոր-Ճամայկա՝ 2-0
Սենթ Վինսենթ-Հոնդուրաս՝ 0-7

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Հոնդուրաս	6	5	0	1	25-5	15
2. Ճամայկա	6	4	0	2	7-4	12
3. Սալվադոր	6	3	0	3	13-13	9
4. Սենթ Վինսենթ	6	0	0	6	2-25	0

Երրորդ խումբ

Գվատեմալա-Կոստա Ռիկա՝ 2-1
Բարբադոս-ԱՄՆ՝ 0-4

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. ԱՄՆ	6	3	2	1	14-3	11
2-3. Կոստա-Ռիկա	6	3	1	2	9-6	10
2-3. Գվատեմալա	6	3	1	2	9-6	10
4. Բարբադոս	6	1	0	5	3-20	3

Այսպիսով, հաջորդ փուլում հանդես կգան Տրինիդադ եւ Տոբագոյի, Մեխիկայի, Հոնդուրասի, Ճամայկայի, ԱՄՆ-ի հավաքականները: Վերջին մասնակիցը հայտնի կդառնա Կոստա Ռիկայի եւ Գվատեմալայի թիմերը լրացուցիչ խաղերից հետո:

Եվրագավաթների համար

Այսօր սկսվում է ֆուտբոլի եվրագավաթների համար մրցաշարի հերթական եռօրյան:

Չեմպիոնների լիգայի երկրորդ խմբային փուլում կանցկացվեն առաջին տուրի խաղերը: Այսօր մրցաշարեզ կմտնեն առաջին եւ երկրորդ խմբերի մասնակիցները: Ահա թե որ թիմերը կհանդիպեն. առաջին խումբ՝ «Վալենսիա» (Իսպանիա)-«Շտուրմ» (Ավստրիա), «Մանչեսթր Յունայթեդ» (Անգլիա)-«Պանաթինայիկոս» (Հունաստան), երկրորդ խումբ՝ «Միլան» (Իտալիա)-«Գալաթասարայ» (Թուրքիա), «Պարի Սեն Ժերմեն» (Ֆրանսիա)-«Դեպորտիվո» (Իսպանիա): Մյուս երկու խմբերի թիմերը կխաղան վաղը: Ներկայացնենք մրցակից զույգերին. երրորդ խումբ «Սպարտակ» (Ռուսաստան)-«Արսենալ» (Անգլիա), «Բավարիա» (Գերմանիա)-«Լիոն» (Ֆրանսիա), չորրորդ խումբ՝ «Լիդս Յունայթեդ» (Անգլիա)-«Ռեալ» (Իսպանիա), «Անդերլեխտ» (Բելգիա)-«Լացիո» (Իտալիա):

Հինգշաբթի օրը նոյեմբերի 23-ին, մրցաշարեզ կմտնեն նաեւ **ՈՒԵՖԱ-ի գավաթի** խաղարկության մասնակից թիմերը: Նրանք կանցկացնեն 1/16 եզրափակիչ փուլի առաջին հանդիպումները:

Ռ. Ա.

Փորձեք լուծել



Մաս 2 քայլից

Մեր տպագրած նախորդ 2 քայլանի խնդրի լուծումն է 1.Գf8:

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված մրցանակային խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Խարկով: 2. Չոպանյան: 3. Այլք: 4. «ՍԻԼ»: 7. Այ: 9. Ար: 10. Կով: 13. Երախ: 14. Սու: 16. Սուրու: 19. Սինա: 21. Նեռն: 24. Ռենա: 25. Լախտ: 27. Զաիր: 28. Արմրինե: 30. Արեւելք: 33. Ալանի: 34. Շանել: 36. Ագրա:

Հորիզոնական

5. Նազո: 6. Այրի: 8. Պայլ: 11. «Ար»: 12. Քե: 15. Նիս: 17. Վույ: 18. Սմ: 20. Սնր: 22. Խիթ: 23. Մառնեուլ: 26. Արազ: 29. Անանուխ: 31. Արար: 32. Տաշի: 35. Եւ: 37. Լար: 38. Բիզե: 39. Գլան: 40. Լոր: 41. Որ: 42. Նես: 43. Ես: 44. «Սենք»: 45. «Իլ»:



Ուղղահայաց

1. Քաղաք Իսրայելում: 2. Հայմորյան ծոցի լորձաթաղանթի բորբոքում: 3. Ծովափնյա քաղաք Բուլղարիայում: 4. Պետություն Ասիայում: 5. Խորհրդային հոգեբան: 6. Խոսքի մաս: 9. Մերձբալթիկացի էստրադային երգչուհու անունը: 10. Հնդիկ բանաստեղծ, փիլիսոփա: 16. Ֆ. Դովլաթյանի «Սենավոր ընկուզենի» ֆիլմի հերոսներից: 17. Չախ իմաստով բառ: 21. Ռումինահայ նկարիչ: 23. «Անուշ» պոեմի կնքահայրը: 24. Աշխարհահռչակ դիրիժոր: 25. Ֆրանսիացի կատակերգակ դերասան: 26. Մոդիլիանիի ստեղծագործություններից: 27. Հայաբաս քաղաք Կանադայում: 31. Վայրի ոչխար: 32. Պաշտպանական հնագույն զենք:

Հորիզոնական

7. Հոգեւոր դպրոց: 8. Մարտեն Դյու Գարն իր վիպաշարում նկարագրել է բուրժուական ընտանիքներից մեկի պատմությունը: Ո՞ր ընտանիքի մասին է խոսքը: 11. Ըստ առասպելի, Աֆրոդիտեի դուստրը: 12. Հայ դերասան, ռեժիսոր: 13. Աղեխորշավորների ընտանիքի անողնաշարավոր կենդանի: 14. Դղյակ, ...: 15. Մթերք: 18. Դրայզերի վեպը: 19. Հրեաների գերագույն Ասվածը: 20. «Թաղականին կնիկը» վեպի հեղինակը: 22. Կոգի Միջերկրական ծովի կենտրոնական մասում: 28. Հայկական հեթանոսական տոմարի 3-րդ ամիսը: 29. Պ. Յավորովի բանաստեղծությունը նվիրված հայերին: 30. Ամերիկյան հայ օգնության ընկերություն: 33. Տղամարդու անուն: 34. Արվեստի գործ: 35. Ս. Գորկու պիեսը: 36. «Դժոխքի» գլուխներից:

Կազմեց Է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

Մրցանակային հաջորդ խաչբառը կտպագրվի «Ազգի» նոյեմբերի 25-ի համարում:

Փորձե՛ք լուծել. եւ արժեքավոր մրցանակը Ձե՛ռն է:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կառավարության 2000 թ. հոկտեմբերի 10-ի թիվ 628 որոշմամբ «Մասիս» մանկական օրթոպեդիկ հիվանդանոց» ՊՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի մասնավորեցման նախապատրաստ[illegible] աշխատանքների իրականացման շրջանակներում հրավիրում է գործարարներին եւ հնարավոր ներդնողներին մասնակցելու առաջ[illegible]ի ներկայացմանը եւ քննարկմանը:

«Մասիս» մանկական օրթոպեդիկ հիվանդանոց»

ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

- Հասցեն՝ Արարատի մարզ, ք. Մասիս
- Գործունեության հիմնական տեսակը՝ բուժսպասարկում
- Պետական բաժնեմասի գնահատված ակտիվները՝ 79181 հազ. դրամ
- Գնահատված արժեքը՝ 67343 հազ. դրամ
- Ընկերության դեբիտորական պարտքը՝ 37520 հազ. դրամ
- Կարճաժամկետ՝ 28263 հազ. դրամ (առ 01.01.00)
- Ընկերության պարտավորությունները՝ 17142 հազ. դրամ (առ. 01.10.00)
- Ընկերության կառուցվածքային միավորները եւ նրանց՝ 4491.3 քմ (4 հաս), հիվանդանոցի մասնաշենք՝ 4241.9 քմ, ավտոտնակներ՝ 193.2 քմ, պահակատուն՝ 22.2 քմ, էլ. ենթակայան՝ 34 քմ,
- Շինություններ՝ 4770, պարիսպ բետոնե, պարիսպ մետաղե
- Հողային տարածք՝ 1.6 հա
- Աշխատողներ՝ 69 հոգի

«Մասիս» մանկական օրթոպեդիկ հիվանդանոց» ՊՓԲԸ-ի բաժնետոմսերի մասնավորեցման վերաբերյալ առաջարկությունները պետք է ներկայացնել հանձնաժողովին՝ հիմք ընդունելով մասնավորեցման հետեւյալ ձեւերից մեկը.

- **պետական գույքի մասնավորեցում մրցութային եղանակով**
- **պետական գույքի մասնավորեցում ուղղակի վաճառքի ձեւով**
- **պետական գույքի նկատմամբ պետությանը պատկանող իրավունքի փոխանցում**
- **ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ ձեւեր:**

Առաջարկությունների հեղինակները մինչեւ առաջարկների ներկայացման վերջին ժամկետը կարող են հանձնաժողովի հրավերով ուղղակի բանակցություններ վարել հանձնաժողովի հետ:

Առաջարկը ներկայացնել ք. Երեւան, Հանրապետության հրապարակ, կառավարական 2-րդ շենք, ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության ընդհանուր բաժին: Առաջարկի ներկայացման վերջին ժամկետը՝ 2000 թ. նոյեմբերի 30-ը:
Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության մասնավորեցման նախապատրաստական աշխատանքների գլխավոր վարչություն 56-29-33, 52-36-38:
Ինտերնետային էջ՝ **http://www.privatization.am, email: tender@arminco.com/:**

ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Full-Time Position Announcement

PUBLIC RELATIONS CONSULTANT

USAID-funded privatization project seeks a professional, mature, responsible person to work in public relations department.

Requirements:
- Excellent writing and editing skills in Armenian language
- Good English, written and spoken
- University degree/professional journalism experience a plus
  Knowledge of economic reform issues preferable
- Creativity and energy required

Please send resume in English by fax or e-mail to the attention of "PR Adviser" by November 27, 2000.
Telephone or personal inquiries are not encouraged.
Email: IBTCI@arminco.com
Fax: 523759

Եվրախորհրդարանի կոչը Թուրքիային նշանակալից քայլ է Մեծ եղեռնի միջազգային ճանաչման առումով

Սկիզբը էջ 1

Եվրախորհրդարանի կոչը ուշագրավ է, բայց ավելի ուշագրավ բնույթ է ստանում Եվրամիության հետ Թուրքիայի հարաբերությունների ընթացքը: Հասկանալի է, որ ԵՄ-ը դրանց կարգավորումը պայմանավորում է Կիպրոսի տարածքից թուրքական զորքերի դուրսբերմամբ, պահանջելով Թուրքիայից 2001 թ.-ին կարգավորել կիպրական հարցը: Դա Եվրախորհրդարանի կոչի հետ համադրելու դեպքում Հայոց ցեղասպանության ճանաչումը նույնպես ԵՄ-ի հետ հարաբերություններում նախապայման է դառնում Թուրքիայի համար: Քանի որ Եվրախորհրդարանն իր զեկույցում թուրքական կառավարությանը հորդորում է ազգային փոքրամասնության իրավունքներ տրամադրել քրդերին, ուստի քրդական հարցը հերթական անգամ ներքաշվում է ԵՄ-Թուրքիա հարաբերությունների ոլորտ:

Նոյեմբերի 16-ին թուրքական պետհեռուստատեսությունը Եվրախորհրդարանում զեկույցի ընդունումը վերագրելով «հույների կողմից ղեկավարվող հայկական լոբբիի» ջանքերին, դա համարեց հայ-հունական դավադրության դրսեւորում: Թուրքական մամուլը մոտավորապես նույն ձեւով արձագանքեց: Վարչապետ Բյուլենթ Էջեւիթը դա որակեց «անպատասխանատու քայլ»: Վերջինը նկատի առնելով Հայոց ցեղասպանությունը ճանաչելու Եվրախորհրդարանի կոչը, ավելացրեց, որ նմանօրինակ պնդումներին չի կարելի լուրջ վերաբերվել, իսկ փոխվարչապետ Մեսութ Յըլմազն ընդգծեց. «Սա անփառունակ կոչ է»:

Վերոհիշյալ զեկույցի առումով թերեւս ուշագրավը պետնախարար Աբդուլհալուք Չայի արձագանքն էր. «Այս փաստաթուղթը Սեւրի երկրորդ տարբերակն է: Ես դեմ եմ ԵՄ-ի հետ հարաբերություններին»: Այս խոսքերը պատահական չեն: Եվրախորհրդարանի զեկույցի նույնացումը Սեւրի նոր տարբերակի հետ առավել եւս: Ի վերջո, Թուրքիայի քաղաքական շրջանակներում Սեւրն իր հերթին նույնացվում է թուրքական ազգային պետականության մասնատման հետ: Սակայն թե ինչու երկրի էթնիկ խմբավորումներին ազգային փոքրամասնության իրավունքներ տրամադրելու Եվրախորհրդարանի կոչը, որն այդ խմբավորումների տեսանկյունից ընդամենը մայրենի լեզվով ազատ հաղորդակցվել, հրատարակություններ կատարել, ռադիո եւ հեռուստահաղորդումներ կազմակերպել է ենթադրում, վերոհիշյալ շրջանակներում դիտվում է Թուրքիայի Հանրապետության ունիտար կառուցվածքը խարխլելու փորձ: Այս պայմաններում ակամա սրվում են ԵՄ-ի հետ Թուրքիայի հարաբերությունները:

Նոյեմբերի 20-ի համարներում թուրքական թերթերն իրենց ուշադրությունը բեւեռել էին այս հանգամանքի վրա: Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ շուտով կսրվեն նաեւ թուրքական կառավարության մաս կազմող կուսակցությունների հարաբերությունները: Ընդ որում, հենց Եվրախորհրդարանի զեկույցի էթնիկ խմբավորումներին առնչվող դրույթի պատճառով: Եթե զեկույցի Հայոց ցեղասպանությունը ճանաչելու կոչն ու ԵՄ-ի թուրքական զինված ուժերը Կիպրոսից դուրս բերելու պահանջը միանգամայն մերժվում են կառավարող երեք կուսակցությունների կողմից, ապա փոխվարչապետ Յըլմազը, որ «Մայր հայրենիք» կուսակցության ղեկավարն է նաեւ, Թուրքիայում քրդերին որոշակի իրավունքներ տրամադրելու օգտին է արտահայտվում: Երբ այս արարքն արժանանում է Չախ ժողովրդավարական կուսակցության նախագահ վարչապետ Էջեւիթի քննադատությանը, իսկ Յըլմազին դրա համար դատապարտում է Ազգայնական շարժում կուսակցության նախագահ, փոխվարչապետ Դեւլեթ Բահչելին, ապա կառավարության մաս կազմող կուսակցությունների միջեւ լարվածությունն անխուսափելի է դառնում:

Համենայն դեպս, թուրքական թերթերում նաեւ այդ լարվածությունը մատնանշվեց: Թե ի՞նչ ընթացք կունենա դա, ցույց կտա ժամանակը: Բայց որ ԵՄ-ի հետ Թուրքիայի հարաբերությունները վերստին մտել են սառեցման հուն, ակնհայտ է: Ավելի քան ակնհայտ են կիպրական խնդրի եւ քրդական հարցի կողքին նաեւ Հայոց ցեղասպանությունը որպես ազդեցության լծակ Թուրքիայի դեմ գործադրելու եվրոպական երկրների միտումները: Սակայն, ինչպիսին էլ լինի դրանց էությունը, Եվրախորհրդարանի Հայոց ցեղասպանությունը ճանաչելու Թուրքիային հասցեագրված կոչը Մեծ եղեռնի միջազգային ճանաչման առումով նշանակալից քայլ է: Հետեւաբար պետք է ողջունել:

ՀԱՄԱՌՈՏ

Էջելոնն Ուկրաինայից ռազմատեխնիկա էր փոխադրում Ադրբեջան

ԵՐԵՎԱՆ, 18 ՆՈՅԵՄԲԵՐ, ՍՆՍՐՔ: Հավաստի աղբյուրներից ստացված տվյալներով, Ռուսաստանի Դաշնության Ռոստով քաղաքում ծերբակալված ռազմատեխնիկա փոխադրող էջելոնը, որի մասին սույն թվականի նոյեմբերի 15-ին հաղորդվել է Ռուսաստանի «Ժամանակ» հեռուստատեսային տեղեկատվավերլուծական ծրագրի ընթացքում, Ուկրաինայից ուղեւորվում էր Ադրբեջան: Տվյալ «մարդասիրական» բեռի փոխադրման վերջնակետն անհայտ է: Կարելի է ենթադրել, որ ռազմատեխնիկան կա՛մ Ղարաբաղում կկիրառվի, կա՛մ կփոխադրվի Չեչնիա: Աղբյուրի խոսքերով, բոլոր դեպքերում Ադրբեջանը շահում է:

Հայաստանի քրդերը՝ ի պատշաղանություն Օջալանի

ԵՐԵՎԱՆ, 20 ՆՈՅԵՄԲԵՐ, ՍՐՄԵՆՊՐԵՍ: Նոյեմբերի 21-ին Ստրասբուրգում Եվրախորհրդի դատարանը կլսի ՔԲԿ առաջնորդ Աբդուլլահ Օջալանի հարցը:

Ըստ Հայաստանում «Քուրդիստան» կոմիտեի նախագահ Կառլենե Չաչանիի, այդ օրը Երեւանում կկայանա հայաստանաբնակ եզդիների ու քրդերի բողոքի ցույց՝ ի պաշտպանություն Օջալանի: Նախատեսվում է, որ Թուրքական կառավարության դեմ ուղղված բողոքի մասնակիցները քայլարշավ կգնան ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատուն՝ հաշվի առնելով, որ Եվրախորհրդարանը գտնվում է Ֆրանսիայում:

Ա. Օջալանի 8 դատապաշտպանները վաղորդի միջնորդությամբ դիմել են Եվրրախորհրդի դատարանին, որպեսզի վերջինս ադահոկի քրդական ազատագրական պայքարի առաջնորդի ներկայությունը դատավարությանը, որն արգելել է Թուրքիան: Հավանական է, նշեց Կ. Չաչանին, որ այս դատավարությունը եւս կանցնի Օջալանի բացակայությամբ: Մեր պահանջը արդար դատավարություն անցկացնելն է, ասաց նա:

Իրան-Հայաստան առեւտրային պալատ

Իրանական ապրանքների 7-րդ
ՑՈՒՅԱՀԱՆԴԵՍ-ՎԱՃԱՌՔ

The 7-th Iranian Trade Fair in Yerevan

Երեւան, նոյեմբեր
17-26, 2000 թ.,
ժամը 10-18-ը

Պետական հանրախանութի (ԳՈՒՄ) տարածքում
Տեղեկությունների համար զանգահարել 56 29 21, 54-10 68

ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՑԱԿ

21 Օրեմբեր

9.00 Հայլուր
9.20 Հեռուստասերիալ «Մեղքերի թողություն»
10.10 Պատմություններ որսորդության եւ ձկնորսության մասին
10.40 «02»
11.10 Գ/Ֆ «Սոդասուիին» (Ֆրանսիա)
12.40 Բարի ախորժակ
13.00 Հայլուր
13.20 Հիթ օֆերթ
13.45 Մանրամասներ
17.00 Հայլուր
17.20 Սեզամ, բացվիր
17.55 Հեմիաթների դաշտ
18.15 Դետեկտիվի ժամ. Գ/Ֆ «Հանդերձյալ կյանք» (Մեծ Բրիտանիա)
20.05 Տոնավաճառ. տնտեսական տեղեկատու
20.35 Տունտունիկ
21.00 Հայլուր
21.40 1 լուր
21.50 Անկախության այբուբեն
21.55 Պրեմիերա
22.05 Հեռուստասերիալ «Մեղքերի թողություն»
23.00 Ռուբիկոն+
23.40 Հայլուր
00.00 Հայլուր (առուտրեն)
00.05 Հայլուր (անգլերեն)
00.15 Կեսգիշերային ճեպընթաց
01.00 Գ/Ֆ «29-րդ կառամատույցը» (Մեծ Բրիտանիա)

ՊՐՈՄԵԹԵՎՍ

08.00 Բարի լույս, Հայաստան (8.30, 9.30 Լրաբեր)
10.00 Սերիալ «Մորենա Կլարա»
10.50 Կեռմաններ
17.00 Մուլտֆիլմ
17.20 Մանկական ժամ. սերիալ «Քեռի Կուդրի պատմությունները», սերիալ «Գյուղի կասվի հեքիաթները»
18.05 Սերիալ «Մորենա Կլարա»
19.00 Աշխարհի հրաշալիքներ. Սահարա
19.10 «TV լոտո»
20.00 Լրաբեր
20.35 Օրը
21.35 «1-02»
21.40 «Ջեղնահարկ»
22.00 Հեռուստաֆուտբոլ+
22.30 Գ/Ֆ «Սոլոմ» (24.00 Լրաբեր)

09.30 Սուրհանդակ (կրկնություն)
10.00 Տոմար
11.30 Հեռանկար (կրկնություն)
19.05 Ծոցիկ
19.30 Սուրհանդակ
20.00 Մուլտֆիլմ
20.10 Հմայիլ
20.30 Ասպարեզ
21.30 Սուրհանդակ
22.05 Ամուն 2000 IV
23.20 Գ/Ֆ «Հյուսիս եւ հարավ» (I մաս) (բառունակություն)
00.00 Սուրհանդակ
00.35 Ակնթարթ
00.40 Գ/Ֆ «Զինադադար» (դրամա) (Ավարտին՝ Սուրհանդակ)

@rmineo wireless Telecommunications **ԻՆՏԵՐՆԵՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ԻՆՏԵՐՆԵՏ» ՍՐՃԱՐԱՆՈՒՄ: Խանջյան 50: Հեռ. 575823:**

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատուեր 1340. Տպաքանակը՝ 3000. Ստորագրված է տպագրության՝ 20. 11. 2000. Գինը՝ 100 դրամ